

9(511)
10.04.2018
Չրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

ԼՍՏԱՐԱՐ

Ճանաչել զիմաստությունն եւ գիրքար, իմանալ զբանս հանճարոյ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՄԱՐԱԴԱՆ՝ ԶՄԴԻԱՅՈՂ ՎԵՐԷ

Մեր նորոգյա պատմության մռայլ էջերից է Մարաղայի սպանդը: Տիպիկ բուրձաբերական ձեռագրով իրականացված նախնիորդ բազմաթիվ փաստագրումներ ունի քսանվեց տարի առաջ Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղում տեղի ունեցածի վերաբերյալ: Դժվար է պատկերացնել մարդկային դաժանության սահմանը, երբ դիտում կամ կարդում ես այդ ծանր օրերի մասին պատմող վկայությունները:

Արցախի ազնվագույն բարեկամ Քերոլայն Քոքսը, որն այդ օրերին եղել է Մարաղայում, ստեղծում է գրում հինավուրց հայկական բնակավայրում կատարված ոճրագործության մասին: «Այն, ինչ որ մենք տեսանք, նկարագրության ենթակա չէ: Գյուղն ամբողջովին ավերված էր: Մարդիկ թաղում էին զոհվածներին, ավելի ճիշտ՝ այն, ինչ հնարավոր էր թաղել. տանջամահ արված, կենդանի այրված, կտրված կամ սողցված դիակի մասեր: Մի մասին թաղել էին նախորդ օրը. նկարահանելու համար նրանց հանցեցի՞ր, թեև հասկանում էինք, թե ինչքան ծանր է հայերի համար: Այդ օրերին Մարաղայում նկարահանված փաստուն է այդտեղ իրագործված սոսկալի կոտորածի մասին՝ գլխատված ու կտրտված դիակներ, երեխաների դիակներ, արյունոտ հող և մարմնի մասեր, որտեղ սողցել էին նրանք...»: Եվ սա միակ վկայությունն է: Իրաչքով փրկված մարաղացիները նույնպես նկարագրում են աղբյուրական բանակի կողմից կատարված բռնարարները, որոնք ենթակա չեն մարդկային բանականությանը:

Մարաղայի ողբերգության մասին փաստերի հարուստ շտեմարան է www.maragha.nk.am եռալեզու կայքը, որտեղ գետնից վավերագրական տվյալները՝ տեքստերի, լուսանկարների ու տեսանյութերի տեսքով, վկայում են իրական ջերմաստիճանային մասին: Կայքի հեղինակ, ներկայումս ԱԶ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանն իրավամբ գրում է: «Մարաղա... Այս անունը Ձեզ կարող է չասել ոչինչ: Անգամ եթե 88-ից հետո առիթ եք ունեցել լսելու «Լեռնային Ղարաբաղ» անվանումը: Մարաղան Լեռնային Ղարաբաղի ամենամեծ բնակավայրերից էր: Եր, որովհետև 1992թ. ապրիլի 10-ին աղբյուրականի օժնակները ներխուժելով ավերել ու իրկիզել են գյուղը, ողջակիզել ու անմարդկային դաժանություններով տանջամահ արել խաղաղ բնակիչներին, մի մասին էլ գերեզմարել ու տարել անհայտ ուղղությամբ: Ուն հաջողվել է փրկվել, ապաստանել են անտառներում և հեռանալով ցրվել աշխարհով մեկ: Իսկ Մարաղան շարունակում է մնալ Աղբյուրականի վերահսկողության տակ: Սույն նախագիծը մի փորձ է ներկայացնելու Մարաղայի իրական պատմությունը, հույսով, որ Դուք կանեք ձեզնից կախված, որպեսզի այն չկրկնվի երբեք և ոչ մի տեղ»:

Ե՛մարիտ է ավա՛ճ՝ չպիտի թույլ տալ, որ այն երբևէ որևէ տեղ կրկնվի: Մենք դրա դառը փորձն ունենք 2016-ի ապրիլյան պատերազմի օրինակով, երբ աղբյուրականի հատուկ զորավորները թալիչ գյուղում դաժան դատաստան տեսան երեք ծեր բնակիչների նկատմամբ: Դա ևս մի ուղերձ էր միջազգային հանրությանը՝ ճիշտ գնահատական տալու Արցախում տեղի ունեցած ողբալի իրադարձություններին: Ցեղասպանությունը կանխարգելելու միակ ուղին այն դատապարտելն ու մեղավորներին հրապարակային պատժի ենթարկելն է, ինչը չի արվել ոչ Մարաղայի, ոչ էլ Թալիչի դեպքում: Եվ քանի դեռ աշխարհը աչք է փակում նման ոճրագործությունների առաջ, մենք պարտավոր ենք միշտ զգոն ու պատրաստ լինել ագրեսորի նորանոր ոտնձգություններին արժանի հակահարված տալու համար:

Դա է հուշում նաև Մարաղայի չսպիացող վերքը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ



ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Սկրտչյանի հրավերով երևանում է գտնվում Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության պատվիրակությունը՝ նախարար Նարինե Աղաբալյանի գլխավորությամբ:

ՀՀ կրթության և գիտության նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության փոխանցմամբ՝ ապրիլի 3-ին ՀՀ ԿԳ նախարարությունում տեղի է ունեցել երկու գերատեսչությունների ղեկավար կազմերի հանդիպում, որի ընթացքում քննարկվել են երկրորդ համագործակցության ամրապնդման և զարգացման հարցեր:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Սկրտչյանը շնորհակալություն է հայտնել Արցախի Հանրապետության պատվիրակությանը՝ հրավերն ընդունելու համար: «Մենք մեծ ակնկալիքներ ու-

նենք մեր համագործակցությունից, քանի որ Արցախը բավականին լուրջ կրթական պոտենցիալ ունի, երիտասարդությունը բացարձակ նվիրված է կրթությանը և գիտությանը: Արցախը կարևոր քայլ է կատարել դեպի որակյալ կրթություն, սակայն կրթության բոլոր աստիճաններում դեռ բավականին անելիքներ ունենք: Ներկայումս շրջանառվում է «Բարձրագույն կրթության մասին» նոր օրինագիծը, որը քննարկվել է նաև Արցախում: Այս ոլորտում առկա է հստակություն մտցնելու հարցը. օրինակ, կողք կողքի գործում են Ստեփանակերտի, Երևանի և Գորիսի համալսարանները, Կապանում՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի մասնաճյուղը, հետևաբար մասնագիտությունների վերաբաշխման, իրար լրացնելու խնդիր ունենք: Բացի այդ, Արցախում ունենք համաշխարհային ամենաբարձր ստանդարտներին

համապատասխանող ուսումնարան, որը ոչ միայն տարածաշրջանում, այլև եվրոպական միությունում է օրինակելի իր հնարավորություններով՝ հանրակացարանային համալիր, լաբորատորիաներ և այլն: Կարծում եմ, այն միայն Արցախի կարիքները բավարարելու համար չէ: Կարգավիճակի ամբողջ տարածաշրջանում ճիշտ աշխատելու պարագայում կարող ենք ապահովել լավ արդյունքներ», - նշել է Լևոն Սկրտչյանը՝ ընդգծելով, որ Արցախի կրթության նախարարության պատվիրակությունը կայցելի նաև դուրս համակարգ իրականացնող միջին մասնագիտական որևէ կրթական հաստատություն՝ տեղում ծանոթանալու վերոնշյալ մեթոդին: Անդրադառնալով հանրակրթության ոլորտին՝ Լևոն Սկրտչյանը նշել է, որ նման հանդիպումները պետք է դարձնել պարբերական, իսկ եթե կարիք լինի, ստեղծել նաև աշխատանքային խմբեր՝ դրանք մանրամասն քննարկելու համար:

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, շնորհակալություն հայտնելով իրավերի համար, նշել է, որ այս հանդիպման արդյունքում առաջվել կհստակացվեն երկու գերատեսչությունների միջև հետագա համագործակցության քայլերը: «Պետք է պարբերաբար հանդիպել, որպեսզի համատեղ իրագործենք բոլոր այն բարեփոխումները, որոնք նախատեսված են: Իհարկե, Արցախի Հանրապետությունը իրավաբանորեն ճանաչված չէ, բայց դա չի կարող մեկուսացնում պատճառ

դառնալ: Արցախի ինտեգրումը միջազգային գործընթացներին և եվրոպական կրթական տարածքին կատարվում է ՀՀ-ի միջոցով, հետևաբար, կարիք ունենք համաձայնեցնելու մեր քայլերը և համատեղ առաջ գնալու: Մեր ազատագրական պայքարն սկսել ենք այն համոզմունքով, որ մեր սերունդների համար ապահովենք լավագույն գործընթացների մատչելիություն, այդ թվում՝ լավագույն կրթության հասանելիություն, ուրեմն և՛ մեր համագործակցությունը կարող է երկուստեք օգտակար լինել: Խնդիրները նույնն են, բայց լուծումները կարող են տարբեր լինել: Օրինակ՝ այսօր Արցախում մշակվում է նոր ռազմավարական ծրագիր հանրակրթության և մասնագիտական կրթության ոլորտներում: Կարծում եմ՝ բարեփոխումների որոշ ծրագրեր հնարավոր է ավելի հեշտությամբ իրականացնել Արցախում, որի արդյունքը կարելի է տարածել ողջ Հայաստանում», - նշել է նա:

Հանդիպման ընթացքում կողմերը ստորագրել են «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի կառավարմանը և ուսումնական գործընթացի կազմակերպմանը «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի մասնակցության վերաբերյալ՝ համագործակցության համաձայնագիրը:

Հանդիպման ավարտին ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Սկրտչյանը պարգևատրվել է Արցախի Հանրապետության 30-ամյակի շունչանդամով:

ՇԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՊՈՏՐԱՏՈՒՄՆԵՐ



Մարտի 26-ից ապրիլի 3-ը Ստեփանակերտում անցկացվեցին ուսուցիչների նախատեսված հեթոթական վերապատրաստման դասընթացները: «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված է ամեն տարի ուսուցիչների 20 տոկոսի վերապատրաստում և ատեստավորում, այսինքն՝ յուրաքանչյուր ուսուցիչ հինգ տարին մեկ անգամ է վերապատրաստվի: Արդեն յոթերորդ տարին է՝ գործընթացն իրականացվում է: Երկրորդ շրջափուլի երկրորդ տարվա վերապատրաստումներին մասնակցեց շուրջ 750 ուսուցիչ հանրապետության բոլոր դպրոցներից՝ 13 առարկայի գծով:

ՀՀ կրթության ազգային ինստիտուտի 35 դասախոսների կողմից ձևավորված 26 խմբում իրականացվեցին 60-ժամյա վերապատրաստումներ՝ մասնագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթությանը վերաբերող օրենսդրության գծով:

ՎՄԻ ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման բաժնի աշխատող Գրիգոր Առստամյանը տեղեկացրեց, որ արդեն երկրորդ տարին է՝ վերապատրաստումներն իրականացվում են նորացված ծրագրով: Լսարանային դասախոսություններին մասնակցելուց զատ ուսուցիչները նախապես ստացած անհատական թեմաների շուրջ ներկայացնում են իրենց հետազոտական աշխատանքների արդյունքները: Բացի դրանից, դասընթացների վերջին օրն անցկացվում են գործնական պարապմունքներ: Ստեփանակերտի բոլոր դպրոցներում դասա-

խոսների ղեկավարությամբ և շրջանների ուսուցիչների մասնակցությամբ կազմակերպվեցին մեզ դասեր:

Վերապատրաստման դասընթացներին հետևել է ԱԶ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը: Նախարարության պատասխանատու աշխատողների ուղեկցությամբ այցելելով Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոց, որտեղ կազմակերպվել էին հիմնական վերապատրաստումները, Ն. Աղաբալյանը տեղում ծանոթացել է վերապատրաստումների ընթացքին, զրուցել ուսուցիչների հետ, լսել նրանց կարծիքներն ու առաջարկությունները դասընթացների վերաբերյալ, հետաքրքրվել, թե ինչքանով են կիրառելի նոր մեթոդները: «Մեզ համար կարևոր է հասկանալ, թե ինչ քերտույններ կան, որ հաջող տարիներին չկրկնենք», - ասաց նախարարը: Նա կարևորեց վիրտուալ կրթության դերը, որը հնարավորություն է տալիս տարբեր աղբյուրներից գիտելիքներ ստանալ և հետաքրքիր

ինչպես է փոխվելու աշխարհը 5-10 տարի անց, ինչ իրականության մեջ ենք ապրելու, ինչպիսի մարտահրավերներ են լինելու, և մեզ ինչ գիտելիքներ են անհրաժեշտ լինելու», - ասաց նախարարը՝ այդ համատեքստում կարևորելով նաև լեզուների դերը: Թվային տեխնոլոգիաներին և լեզուներին տիրապետելը շատ կարևոր է: Ի դեպ, շատերը նկատած կլինեն, որ երեխաները հենց փոքրուց հակում են հետաքրքրվելու են ցուցաբերում դրանց նկատմամբ:

Բոլորը կարող են հաստատել, որ իրենց երեխաները, թոռները հենց սկսում են խոսել, առաջին գիտելիքները, շփումները ստանում են օտարալեզու աղբյուրներից՝ համակարգիչ, հեռախոս, պլանշետ (գրեթե բոլորի տներում դրանք կան), մտնում են համացանց՝ մուլտիֆոններ նայում (որոնք հիմնականում օտարալեզու են): Փաստորեն երեխաները լեզուների հետ շփվում են մանկությունից: Այսինքն՝ նոր եկող սերունդն ավելի լավ է տիրապետում թվային տեխնոլոգիաներին և լեզուներին: Լեզուների իմացությունը կարևոր է նաև այն առումով, որ մեր երկրում զբոսաշրջությունը հայտարարվել է տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը, և օտար լեզվի իմացությունը անհրաժեշտ է նաև սպասարկման ոլորտի աշխատողներին:

«Այսօր ծեր առջև նստած աշակերտը շատ տարբեր է 20-րդ դարի աշակերտից: Այսօրվա աշակերտի մտածելակերպը բոլորովին այլ է, դուք պիտի կարողանաք նրանց հետաքրքրել, իրենց ընկալելի լեզվով ամեն ինչ մատուցել: Այսօր վիրտուալ ինֆորմացիան ավելի մեծ դեր է խաղում. դուք չպետք է համեմարարեք միայն դասագրքում եղածը սովորել, դա արդյունք չի տալիս, հնարավոր բոլոր միջոցները պետք է օգտագործեք հետաքրքրություն առաջացնելու համար, առավել ևս՝ բնագիտական առարկաների նկատմամբ, որը լուրջ խնդիր է մեզ համար: Այդ խնդիրը դուք պետք է լուծեք, որպեսզի մեր անտ հետաքրքրություն առաջացնեք, ճիշտ կողմնորոշեք երեխաներին», - դիմելով ուսուցիչներին՝ ասաց ԿԳ նախարարը:



մեթոդներով կազմակերպել դասապրոցներ: «Նույնիսկ այնքան կարևոր չէ ինչ գիտելիքներ ենք տալիս տարբեր առարկաներից, այլ՝ թե ինչ գիտելիքներ ենք տալիս, որով աշակերտները կարողանան ինքնակառավարվել և անընդհատ լրացնել իրենց գիտելիքները, որովհետև չգիտենք

Սեփ. լրատվություն

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՆՁԱՆ ՆՈՐ ԳՈՐԾԻՔԱՆԱՐԵՐԻ



Օրերս կայացած ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում ինժեռ-մատիկա առարկայի ուսուցիչներին իր նոր գիտելիքներն է փոխանցել ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի ինժեռմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ, Microsoft-ի կրթության փորձագետ Ռուզաննա ՍՏԵՓԱՆՅԱՆԸ:

Նրա հետ «Լուսարար»-ի հարցազրույցը:

Տիկին Ստեփանյան, ի՞նչ գիտելիքներ փոխանցեցիք Արցախի ուսուցիչներին:

Սեկ ամիս առաջ Դուբայում տեղի ունեցավ Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային ցուցահանդես, որտեղ ամեն երկրի ներկայացուցիչ ցուցադրում էր, թե ինչն ինչպես է կրթական տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառում ուսուցման գործընթացում: Ծատ հագեցած դասընթացներ էին: Առավելագույնը 10-ից մինչև երեկոյան 6-ն ընթացում էին վերապատրաստումները, կես ժամը մեկ փոխվում էին վերապատրաստողները: Ծատ հետաքրքիր գործիքաշարերի հետ ծանոթացանք: Այդ էր պատճառը, որ մեր կողմից նաև առաջարկ եղավ, որ տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների բաղադրիչը և ինժեռմատիկայի ծրագրերը փոփոխության ենթարկվեն: ԿԱԻ տնօրեն Նորայր Դուկասյանն էլ առաջարկեց, որ ուսուցիչներին փոխանցենք մեր ստացած գիտելիքները, որպեսզի նրանք էլ ծանոթանան այդ գործիքաշարերին: Ինժեռմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաների մեր բաժինն ամբողջությամբ թարմացրեց ծրագիրը, և ուսուցիչներին այդ ծրագրով վերապատրաստեցինք:

Ի՞նչ է իրենից ներկայացնում ծրագիրը, համառոտ ներկայացրեք, խնդրեմ:

Պա բոլորովին նոր, հետաքրքիր գործիքաշարերով ծրագիր է: Նախքան Արցախ գալը մենք հավաքել ենք տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետներին, նրանք վերապատրաստել, որպեսզի իրենք էլ գնան և ուսուցիչներին վերապատրաստեն, իրենց ստացած գիտելիքները նրանց փոխանցեն: Գիտեք, որ վերապատրաստման դասընթացներում ՏՀՏ գծով վերապատրաստվում են բոլոր առարկաների ուսուցիչները: Նրանց հետ նույնպես պարապմունքներ են անցկացրել ԿԱԻ մասնագետները: Նրանք էլ ծանոթ են նոր գործիքաշարերին:

Ինժեռմատիկայի ծրագիրը ներառում է Google-ի, Microsoft-ի կրթական գործիքները: Խոսքը ոչ օֆիսային փաթեթին վերաբերող գործիքների մասին է: Գունարած դրան՝ ավելացրել ենք «Շրջված դասարան» տեխնոլոգիաների հետ կապված գործիքաշարը, որն իրենից ներկայացնում է «թարս» դասարան. տեխնոլոգիան, երբ ուսուցիչը պետք է դասարանում որևէ բան բացատրի, և երբեման լսի ու դասարանում անի, հակառակ ուղղությամբ է տեղի ունենում: Մենք ներկայացնում ենք այնպիսի մեթոդ, որի ընթացքում ուսուցիչը հանձնարարում է երեխային համացանցի միջոցով իր ստեղծած նյութերի օգնությամբ ծանոթանալ ամբողջ նյութին, հետո գալ դասարան և դա կիրառել գործնականում ու ոչ թե ժամանակ ծախսել տեսական մասը հաղորդելու վրա: Ներառվել ենք նաև C++ ծրագրավորման լեզուն, որը փոխարինելու է եկել Պասկալ ծրագրավորման լեզվին: C++ ծրագրավորման լեզուն շատ ավելի ժամանակակից է, ավելի շատ կիրառվող՝ ստեղծելու բջջային հավելվածներ: Սի խոսքով, ուսուցիչներին ծանոթացրել ենք այդ ամբողջ գործընթացին՝ գործնական աշխատանքներ կատարել ու դրանք հավաքել մի թղթապանակում: Ուսուցիչներին նաև առաջարկել են, որ լավ նյութերը, որոնք վերջնական տեսքի կբերվեն և կուղարկվեն մեզ, կտեղադրվեն ԿԱԻ կայքում՝ նրանց հեղինակային իրավունքն ամբողջությամբ պահպանվելով:

Ի՞նչ խնդիրներ պետք է հաղթահարեն ուսուցիչները:

Կարծում են, դա ուսուցչի ցանկությունից է կախված: Ցանկացած իրավիճակում, իհարկե, միշտ էլ տեխնոլոգիաները, տեխնոլոգիաներով հագեցվածությունը կարևոր են: Դասարանում առանց դրանց հնարավոր չէ կազմակերպել ինժեռմատիկայի նորմալ դաս: Ցանկալի է, որ այնտեղ լինի առնվազն 10-12 համակարգիչ, ամեն համակարգիչի առաջ նստի 1-2 երեխա, և համակարգչային սենյակն ապահովված լինի համացանցով, որ-

պեսզի ուսուցիչը կարողանա հանձնարարել ցանկացած նյութ, և աշակերտներն ինտերնետի միջոցով կարողանան ստեղծել այդ կրթական նյութերը ու փոխանցել իրար: Ամեն դեպքում այս նոր կրթական տեխնոլոգիաներն ամբողջությամբ տեղափոխվում են օնլայն՝ առցանց հարթակ: Ինչի՞ համար: Ծատ հետաքրքիր միտում նկատվեց, դրսում դա արդեն կա. Անդրոիդ և Aios օպերացիոն համակարգով գործող տաբլեթներն այնպես են աշխատում, որ ծրագիրը պետք է խտալացիա արվի ու ներդրվի այդ սարքի մեջ: Բայց ծրագիրը ստեղծողն այդքան էներգիա և միջոց չի ծախսի երկու օպերացիոն համակարգերի համար: Դրա փոխարեն ստեղծում է մեկ օնլայն հարթակ, և բոլոր տիպի օպերացիոն համակարգերից կարելի է մուտք գործել ու աշխատել: Այս դասընթացներին ես ուսուցիչներին երկու այդպիսի ծրագրերի հետ են ծանոթացրել, որոնք ուղղակի օնլայն հարթակում են աշխատում, և նրանք շատ են հավաքել: Բոլոր միաբերան ասացին, որ անպայման կօգտագործեն դասապրոցեսում, որովհետև շատ կիրառելի գործիքաշար ունի:

Ի՞նչ կասե՞ք հեռավար ուսուցման մասին:

Կրթության ազգային ինստիտուտում այս տարի ստեղծեց իր հեռավար ուսուցման հարթակը, և դրա միջոցով արդեն իրականացնում ենք վերապատրաստումներ: Երկրային ԿԱԻ աշխատողների հետ վերապատրաստումներ ենք անում «Google-ի կրթական գործիքները» թեմայով: Ծատ շատով մարզերի (նպատակ ունենք՝ նաև Արցախի) ուսուցիչների հետ կկազմակերպենք հեռավար ուսուցում և նրանց բոլորին կծանոթացնենք այդ նորագույն, ժամանակակից գործիքաշարերին: Այսինքն՝ խնդիրը, որ ուսուցիչը հնարավորություն չունի մի տեղից մյուսը գնալ, որ ծանոթանա այդ գործիքներին, արդեն դուրս է գալիս օրակարգից և լուծվում է տարածության հետ կապված խնդիրը: Սրա առավելություններից մեկն այն է, որ անսահմանափակ է դեռնում այն ժամանակահատվածը, որի ընթացքում ուսուցիչը կրթվում է: Իրեն հարմար ցանկացած ժամի նա կարող է մտնել, իր վարժություններն անել, տեսանյութերը նայել, քանզի նյութերը տեղադրված են օնլայն: ԿԱԻ-ն ունի այդ տեսադասերի YouTube ակաունթիան, որտեղ տեղադրված է 110 դաս: Տեսադասերն ամբողջությամբ հայալեզու են՝ ստեղծված մեր հեղինակային նյութերով: Այժմ կան տեսադասեր ինժեռմատիկա առար-

կայից, ՏՀՏ գրագիտությունից, հայոց լեզվից, մաթեմատիկայից: Միտք ունենք հարստացնել դրանք: Ունենք շատ մեծ դիտումների քանակ: Ընդամենը 110 տեսադաս է, բայց կա 140 հազար դիտում: Այս ցուցանիշը վկայում է, որ ուսուցիչը կարիք ունի դրանց, և մենք անընդհատ հարստացնելու ենք ու նպատակ ունենք բոլոր առարկաների գծով նյութեր տեղադրել:

Դուք հարցրե՞լ եք, Արցախի ուսուցիչները տեղյակ են այդ կայքին:

Տեղյակ չէին, ես նրանց հանգամանակից ներկայացրել եմ: Informatika.am-ը նույնպես ԿԱԻ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կայքն է, որը դարձյալ ինժեռմատիկայի ուսուցիչների ձեռքի գործիքն է և ամեն վայրկյան նրանց հարկավոր է լինում: Ես անընդհատ այդտեղ նյութեր են լցնում, մեր բաժնի աշխատողները հարստացնում են: Այնպես որ, ամեն ինչ անում ենք, որ ուսուցիչները ներդրվեն չկրեն նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելուց:

Կենդանի շփումն, իհարկե, շատ կարևոր է, բայց առանց դրա էլ ուսուցիչը կարող է ծանոթանալ լավագույն մեթոդների, քանի որ դրանք էլ կենդանի դասեր են:

Իհարկե, ամեն մի ուսուցիչ իր ձայնով, իր տեսքով այդտեղ ներկայանում է, բացատրում:

Ի՞նչ եք կարծում, տարիքն այստեղ կապ ունի՞: Ուկառի ունեն այն, որ տեղեկատվական տեխնոլոգիաները երիտասարդներն ավելի հեշտ են յուրացնում:

Իմ օրինակի վրա ասեմ. C++ ծրագիրը ես 33 տարեկանում եմ սովորել, անգլերենը՝ 32-ում, քանի որ առանց դրա հնարավոր չէ: Բոլորն էլ կարող են, ցանկություն է հարկավոր: Ուսուցիչներին պետք է մոտիվացնել: Եթե ուսուցչին մի քիչ մոտիվացնում ես, նրա մոտ աշխատելու ցանկություն է առաջանում:

Ո՞րն է այդ մոտիվացման հիմքը, աշխատավարձի բարձրացումը...

Ես դպրոցում 15 տարի մաթեմատիկայի և ինժեռմատիկայի ուսուցիչ եմ աշխատել: Զաջողություններս ավելի շատ ինժեռմատիկայից էին, որովհետև երկու տարի անընդմեջ դարձել եմ Microsoft-ի կրթության փորձագետ: Իհարկե, լավ կլինի, որ ուսուցիչները բարձր աշխատավարձ ստանան, բայց անկեղծ ասած, այդ հանգամանքը երբեք իմ լավ աշխատելու մոտիվացիա չի եղել: Եվ քանի որ ես լավ էի աշխատում, դրանից բխում էր, որ կարողանում էի նաև գումար աշխատել:

Իսկ ու՞րե՞ր կարող են դառնալ Microsoft-ի փորձագետ:

Սա ուսուցիչների հարթակ է, որտեղ նրանք գրանցվում են: Առաջադրանքներ են տրվում: Դուք պետք է ներքեր ստանաք այդ առաջադրանքները. 80-100 տոկոսը լուծելու դեպքում բեյջեր են տալիս: 15 բեյջ հավաքելու դեպքում դառնում եք կրթության փորձագետ: Բայց նյութերն ամբողջությամբ անգլերեն են, պիտի քայլաշարն ամբողջությամբ կարդալ, հերթականությամբ կատարել առաջադրանքները, հավաքել անհրաժեշտ միավորը: Զենց հավաքեցիք, դառնում եք կրթության փորձագետ:

Ի՞նչ է շահում դրանից ուսուցիչը:

Սա համաշխարհային ճանաչում ունեցող կրթական մակարդակ է, միշտ գտնվում են նրա տեսաշարերը: Փորձագետ ուսուցիչները պետք է սերտորեն աշխատեն Microsoft-ի հետ՝ կիսելով դասապրոցեսում նորարարական տեխնոլոգիաների կիրառման իրենց փորձը: Եթե ուսուցիչը դառնում է Microsoft-ի փորձագետ, ստանում է անվճար ճանապարհորդության իրավունք՝ մասնակցելու «Գործընկեր ուսման ոլորտում» համաշխարհային ֆորումին, անվճար տեխնոլոգիա իր դպրոցի համար, ճանաչում և առաջխաղացում, հնարավորություն՝ ներսից ծանոթանալ Microsoft-ի ռազմավարության տեխնոլոգիաներին, մասնագիտական և կարիերայի զարգացման հնարավորություններ ու ատեստավորում, հնարավորություն՝ իր փորձով կիսվելու համաշխարհային ճանաչում ունեցող ուսուցիչների և Microsoft-ի կողմից կազմակերպվող հատուկ միջոցառումներին:

Լավ ուսուցիչ տեղը բոլորը գիտեն, նա զնահատվում է ամեն առումով: Իսկ ինչպիսի՞ն են Ձեր տպավորությունները Արցախի ուսուցիչներին:

Անչափ տպավորված եմ նոր գիտելիքներ ստանալու նրանց ցանկությունով: Մեծ սիրով սովորում են, երբեք չեն ասել՝ կլինի՞ 15 րոպե շուտ գնանք կամ՝ ե՞րբ ենք ավարտելու: Ընդհակառակը, այնքան արագ էին անցնում պարապմունքի ժամերը, այնքան տարված էին աշխատում, որ նույնիսկ դասամիջոցներն էին օգտագործում: Ծատ պատրաստակամ են, գրագետ: Երևանի դպրոցների ինժեռմատիկայի ուսուցիչներից (որոնք մասին ասում ենք՝ առաջատար են) ես առանձնապես չտարբերեցի նրանց: Կարծում եմ՝ նրանք շատ լավ արդյունքներ կունենան:

Հարցազրույցը՝ Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

«ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ»-Ը ԱՐՃԱՆՈՒՄ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ Ե ՄԱՆԱԿԻՅՆԵՐ

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը ստեղծվել է 2013թ. Հայաստանում և մաս է կազմում համաշխարհային ցանցի, որին անդամագրված է 46 երկիր: Նպատակը կրթական հավասարության ապահովումն է: Հայաստանում և Արցախում կան համայնքներ, որտեղ ուսուցիչների պակաս կա: Հիմնադրամը հավաքագրում է կարող մարդկանց և գործուղում է եռավոր բնակավայրեր, որտեղ ուսուցիչների թափուր տեղեր կան: Մարտունու շրջանի Նորշեն, Քաշաթաղի շրջանի Վաղազին, Շուշիի շրջանի Եղծահող համայնքներում արդեն այդ ծրագրով աշխատող ուսուցիչներ կան:

Ապրիլի 5-ին «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի ներկայացուցիչները հանդիպում ունեցան ԱրՊՀ ուսանողության հետ: Պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը, ուղղունելով հիմնադրամի ներկայացուցիչներին, ասաց, որ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը համագործակցության ծրագիր ունի ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության և ԱրՊՀ-ի հետ:

Ծրագրի հիմնական նպատակը ներկայացրեց հիմնադրամի հավաքագրման աշխատանքների գծով

տնօրեն Դավիթ Համբարյանը: Նրա պարզաբանմամբ՝ ծրագիրն ունի հիմնականում երկու բաղադրիչ, մարդիկ, որոնք անդամագրվում են «Դասավանդի՛ր, Հայաստան»-ին, դպրոցում դասավանդելու զուգահեռ իրականացնում են համայնքային ծրագրեր:

Անկախ նրանից, թե անդամագրվողը ինչ ֆակուլտետ է ավարտել, ունի մանկավարժի որակավորում, թե՛ ոչ, իրավունք ունի մասնակցել ծրագրին: Հիմնադրամը հնարավորություն է տալիս մասնակցներին իր երկամյա ծրագրի ընթացքում ձեռք բերել մանկավարժի որակավորում: Նախնական պայմանը առնվազն բակավարժի որակավորումն է: Ծրագրի մասնակիցը հիմնադրամի միջոցներով ձեռք է բերում մագիստրոսի աստիճան:

Դա իրականում առաջնորդության հնտությունների զարգացման հնարավորության ծրագիր է, քանի որ անձի համար բացում է ընդհանուր և կարիերայի զարգացման հեռանկարներ:

Ծրագիրն ավարտելուց հետո մասնակիցները դառնում են հիմնադրամի շրջանավարտների միության անդամ, այսինքն՝ նրանց միջև կապը շարունակվում է. հիմնադրամի գործընկեր կազմակերպությունների մի-



ջոցով նրանք ապահովվում են աշխատանքով: Բայց ասենք, որ շատերը ծրագիրն ավարտելուց հետո մնում են կրթության համակարգում:

Հիմնադրամը փնտրում է մարդկանց, որոնք ցանկություն ունեն դառնալ այս առաքելության մաս, ովքեր համարձակ են, նորարար, ովքեր ու-

զում են փոփոխություն տեսնել ոչ միայն իրենց անձնական կարիերայի, այլև երկրի զարգացման մեջ, փոփոխություն բերել երեխաների կրթության ոլորտում, որի կարիքը, իրոք, զգացվում է:

Ինչպե՞ս է կատարվում ընտրության գործընթացը: Ցանկացողներն անցնում են մի քանի փուլ. «Teach For Armenia»-ի կայքում առցանց հայտագրվում են, անցնում բազային գիտելիքների ստուգման թեստավորում, գնահատման կենտրոնի եզրակացությունից հետո նրանց տրվում է հնարավորություն պայմանային բնակավայրերը, որոնցում արդեն կան ծրագրով աշխատողներ, որպեսզի պոտենցիալ մասնակիցները տեղում ծանոթանան պայմաններին, փորձի փոխանակում կատարեն, որից հետո համաձայնվելու դեպքում նրանց հետ հիմնադրամը կնքում է պայմանագիր: Այս անցնում է 5-շաբաթյա վերապատրաստման դասընթացներ հիմնադրամի ամառային ինստիտուտում, որոնց նպատակն է նրանց զինել դասա-

վանդվելիք առարկաների գիտելիքներով, որ սեպտեմբերի 1-ից դասարան մտնեն:

Այս պահի դրությամբ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը գործ ունի ավելի քան 5700 աշակերտի հետ, ունի 71 մասնակից, 14 շրջանավարտ, որոնք ներկա են ՀՀ և Արցախի 52 համայնքներում: Հիմնադրամը նպատակ ունի ծրագիրն Արցախում ընդլայնել: Դ.Համբարյանի խոսքով՝ դիմորդների թվի պակաս չունեն, բայց ունեն մեր հայրենիքի բոլոր հատվածներից մասնակիցներ ունենալու խնդիր, որն էլ իրականացնում են:

Ծրագիրը փոխհատուցվող է, մասնակիցներն ապահովվում են գրավիչ աշխատավարձով: Նրանք մշտական կապի մեջ են կենտրոնի հետ, ստանում են անհրաժեշտ աջակցություն դասավանդման և համայնքային իրենց ծրագրերն իրականացնելու ընթացքում:

«Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրին մասնակցելու հայտերի ընդունման ժամկետը մինչև ապրիլի վերջն է:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՌՈՐՅԱ ՈՒՍՈՒՑԻՉՈՂ՝ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՄՔ

Ինչքան էլ տեխնիկապես զինվի կրթական համակարգը, և փորձ արվի թեթևացնել ուսուցչի աշխատանքը, միևնույն է, ծանր բեռը նրա ուսերին է, գլխավոր դերը նրան է պատկանում, առաջնայինը նրա գիտելիքներն են, հնարամտությունը, մասնագիտական կարողությունները: Բոլոր միջոցներն առանց այդ գլխավոր ու կարևորագույն դեմքի առ ոչինչ են, դրանց պատշաճ գործածությունը՝ մասնավորապես գործունեությունը լրացնող, որոնք ավելի են բացահայտում ուսուցչի անփոխարինելի դերակատարությունը:

Այդ դերակատարությունն ավելի է մեծանում կրթական գործընթացում հիմնաքարերը շարելիս, երբ դասվարը հնուտ ճարտարապետի նուրբ ոճով կերտում է մասնական հոգու վեհասլաց կոթողը, որը չի սասանվելու ոչ մի փոթորկից: Շատ կարևոր է տարրական դասարաններում հնուտ ու բանիմաց դասվարի առկայության համազանցը: Հաճելի է չափազանց, երբ այդ իրողությանն ակնհայտեսես դառնում երիտասարդ ուսուցչուհու դասին: Դաս, որ կարող է շատ-շատերի համար օրինակ ծառայել, արևի ջերմություն պարգևել շրջապատին:

Խնայատի միջնակարգ դպրոցում՝ երկրորդ դասարանում, մայրեցիկ դաս է, ընդօրինակման դաս, առաջին դասը, որի «գլխավոր հրամանատարը» ժենյա Արզումանյանն է: Նրա ներածական խոսքով էլ բացվում է իրական մի հեքիաթ, որն իր կախարհանքով քաշում է բոլորին՝ տանելով նրանց զարմանահորաշ հեքիաթների գունավառ ու թափանցիկ մի պարզ աշխարհի. «Լինում է, չի լինում, մի դասարան է լինում: Այդ դասարանի դասվարն էլ ես եմ լինում: Ամեն առավոտ, երբ արևն աչքերիս մտնում էմ դասարան, տասնուհին արև է իմ դեմ շողշողում: Ու ջերմանում եմ ես այդ համաստեղությանը»:

Ուսուցչուհին իր առջև կարևոր նպատակներ էր դրել.

ա) գեղարվեստական ստեղծագործության տեսակներից հեքիաթի առանձնահատկությունների գիտակցում.

բ) գեղարվեստական ստեղծագործության բովանդակության և զգայական ընկալման ապահովում, արտասանական ունակությունների կատարելագործում, ստեղծագործական կարողությունների զարգացում.

գ) նախադասության մասին ձեռք բերած գիտելիքների համակարգում.

դ) դասարանական բեմադրությունների ժամանակ կատարել հերոսների դերերը՝ օգտագործելով շարժման ու խոսքի տարբեր ձևեր, ստեղծելով բեմադրվող սցենարին հա-

մապատասխան կահավորանք.

ե) ձևավորել հարգանք դիմացիմ արժանապատվության նկատմամբ, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն:

Դասարանը կահավորված էր բարձր ճաշակով և լիովին համապատասխանում էր մանուկների գունավառ աշխարհին ու հեքիաթային զարմանահորաշ երևակայությանը: Ամեն ինչ ծառայեց իր նպատակին:

Սովորողները յուրացրել են «Երկնքից երեք խնձոր ընկավ» բաժինը, գիտեն բոլոր հեքիաթների արտահայտած իմաստները, ժ-



ղովողական իմաստությունները, և հիմամուն էր, որ նրանք հեքիաթները ներկայացնեին թատերական ժանրի տարատեսակներով՝ մատնային, սովորական, տիկնիկային, երաժշտական, մնջախաղի: Երեխաները մեծ ոգևորությամբ էին կատարում իրենց դերերը՝ ամեն քայլափոխի արժանանալով դասվարի խրախուսական հայացքին: Իսկ երբ ուսուցչուհին հարց է ուղղում սովորողներին, թե լեզվական ինչ նոր ընկերոջ հետ են ծանոթացել, ու հանձնարարում է հավաքել կտրտված նախադասությունը (խմբային աշխատանք), ժրջան մեղուները գործի են անցնում՝ արագ կատարելով առաջադրանքը:

Լինի հեքիաթ կախարհական, Կենդանական, թե իրական, Միշտ էլ չարը պատժվում է, Կերջում բարին հաղթանակում...

Այսպես են մեկնաբանում կրտսեր դպրոցականներն իրենց անցած նյութերն ամփոփելիս: Իսկ մեծ փուչիկուն ամփոփված խնձորները, չիմանալով ճնշմանը, դուրս են ժայթքում փուչիկից ու բաժանվում բոլորին՝ ժողովրդական իմաստուն օրինանքներով ու մաղթանքներով:

Դասին ներկա գործընկերները և մյուս ուսուցիչներն ընդգծեցին մի շատ կարևոր

հանգամանք. սովորողների գիտելիքների անսպառ աղբյուրն ուսուցիչն է, և հենց դրա շնորհիվ էլ 2-րդ դասարանի դասվարը, մտերմիկ միջավայր ստեղծելով կրտսեր սովորողների հետ, հասել է նման հաջողության: Մեծ ջանքեր ներդնելով՝ նա կարողացել է փոքրիկների մեջ սեր առաջացնել դեպի մեր ազգային թատրոնը՝ ստանձնելով ռեժիսորի գլխավոր դերակատարությունը: Ուսուցչուհու առաջին բաց դասն էր այսպիսի շրջանակում, և նա պատվով դուրս եկավ այդ քննությունից, քանզի նրան հաջողվել է երկրորդիցներին զինել գիտելիքների որոշակի պաշարով, իրար հետ համագործակցելու կարողություններով: Երեխաներն էլ այնքան պարզ ու անկեղծ էին, արևի պես ջերմ ու անմիջական, որ հյուրերն իրենց հետ տարան մի բուռ արև ծնունդ վերջին օրից:

Տարրական դպրոցը կրթական համակարգի հիմքն է: Ինչքան ամուր է այդ հիմքը, նույնքան էլ հաջողված է կրթական գործը այդ կրթօջախում:

Հյուրերին, որ ժամանել էին Ասկերանի, Նախիջևանի, Խրամորթի և Ուղտասարի դպրոցներից, ժողովրդական բանահյուսության մի այլ ժանր էր սպասում հինգերորդ դասարանում մայրեցիկի դասին (ուսուցչուհի՝ Առլենա Գասպարյան):

Այստեղ դասի թեման էր՝ «Առակս ի՞նչ կցուցանի» բաժնի ամփոփում:

Ուսուցչուհու ջանադիր աշխատանքով հայտնվեցին և գրականության կաթինները օրըստօրե հարստանում է գանազան ուսումնական նյութերով, իսկ այդ օրվա դասի վերաբերյալ ստեղծել էր բազմաթիվ պատասխաններ ու օժանդակ նյութեր:

Նրա գլխավոր նպատակն էր՝ ա) բացահայտել սովորողների գիտելիքներն առակի ժանրի, տեսակների ու կառուցվածքի, նրան բնորոշ այլաբանության ու բարոյախոսության վերաբերյալ, բ) առակների միջոցով համաձայնեցնել արժեքներ զարգացնել, գ) սովորողներին տալ բարեկիրք հաղորդակցվելու կարողություններ, դ) նրանց մեջ դաստիարակել մարդկային բարոյական արժեքներ՝ ազնվություն, ճշմարտախոսություն, ընկերասիրություն, նվիրվածություն, երախտագիտություն, ե) գնահատել մարդկային դրական ու բացասական հատկանիշները և վերաբերմունք դրսևորել դրանց հանդեպ:

Կիրառած բոլոր մեթոդներով՝ «Մտքերի տարափ», «Գտիր զուգընկերոջը», «Դ-աձև աղյուսակ», «Շրջայց պատկերասրահում», «Գտիր ավելորդը», «Ճանաչիր առակը», ու-

սուցչուհին վեր հանեց սովորողների ձեռք բերած գիտելիքները առակի վերաբերյալ:

Նրանք կարողանում են բացատրել առակների բարոյախոսությունը, ճանաչում են ամենահին առակագրին՝ Եզրպոսին, հայ գրականության առակագիրներին՝ Գոշին և Այգեկցուն, Խնկո-Ապրող, Մկրտիչ Կորյունին: Գիտեն նաև, որ առակներ են գրել Խ.Աբովյանը, Ավ. Իսահակյանը, Հովհ. Շիրազը, տարբերում են ժողովրդական ստեղծագործության տարատեսակները՝ հեքիաթ, առակ, առած-ասացվածքներ, մեկնաբանում են վերջիններիս իմաստները: Կատարվեց նաև քերականական առաջադրանք հակամիջոցների, տողադարձի, վանկատման վերաբերյալ:

Դասերի քննարկման ընթացքում հնչող դիտողությունները պայմանավորված էին երիտասարդ ուսուցիչների մեթոդական անփորձությամբ, որոնք կշտկվեցին ժամանակի ընթացքում, միայն թե ձգտումը մեծ լինի:

Վերջում հյուրերին գեղեցիկ անակնկալ էր սպասում:

Դպրոցում փետրվարյան օրերը հազեցած էին բազմաբնույթ միջոցառումներով, որոնք տեղի էին ունենում կարևոր իրադարձության՝ «Շարժում-30»-ի շրջանակներում: Եվ այդ օրը, ահա, միջոցառումների զագաթնակետը դարձավ դպրոցականների ելույթը, որի հաջողության համար քրտնաջան աշխատանք էին կատարել դպրոցի կազմակերպիչները:

Խորիտ երգերը, պարերը, հերոսներին փառաբանող խոսքերը միահյուսվել, դարձել էին հզոր մի բռունցք, արցախցու բռունցքը, որի դեմ անգոր եղան և մեծաթիվ բանակները, և զորավոր զենքերը:

Ցուցադրվեցին նաև «Արմենիա» հեռուստաալիքով հեռարձակված «Խնայատուն» ինչպես խրամատուն» ֆիլմից դրվագներ, որոնք կարևոր ազդակներ են այսօրվա դպրոցականների ռազմախայրենասիրական դաստիարակության գործում: Միջոցառումն ավարտվեց ուղերձ-կոչով.

Հեռվում ծկարած հայրենակիցներ, Արցախն է կանչում, տուն վերադարձեք, Դուք մի՛ մոռացեք ճամփաները մեր, Եկեք բռունցքվե՛ք, որ հզոր լինենք, Որ կարողանանք թշնամուն հաղթել, Ինչ անելու ենք, միասին անենք, Եկեք, տուն եկեք, քանի ուշ չէ դեռ:

Ուսուցիչը կրթօջախի գլխավոր դեմքն է, և նրա գործունեությամբ է պայմանավորված դպրոցականների բարոյաճգնաբանական նկարագիրը:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՇՈՒՆՉ ՈՒ ՈՒՓԻ ՏՎՈՂ

Իր ժողովրդի դարբինն է ամեն մի ժողովուրդ:

Գարեգին Նժդեհ

Աշխարհից հեռու մի գողտրիկ անկյուն, պատմական Ավետարանոց՝ թիկն տված Քիրոսի դռանը, հպարտ իր սիրասուն գավակներով, տիրաբար փռված թովիչ բուռնության գրկում, մոր նման ուրախանում է իր որդիների հաջողություններով ու լուռ օրհնում ամեն մեկի կյանքի ճանապարհը: Որտեղ էլ նրանք լինեն ու գործեն, միայն թե լինեն հայրենասեր, լինեն արի, քանզի հայի ճակատագիրը միայն այդ է հուշում:

Միջոցառումը, որի մասին ուզում եմ խոսել, կազմակերպվել էր Ասկերանի շրջանի ՄՊՍԿ ասմունքի և երաժշտության խմբակների ղեկավարներ Անահիտ Աղաջանյանի և Ֆլորա Ավանեսյանի կողմից:

Խմբակավարները ջանք ու եռանդ չէին խնայել միջոցառումը հրաշալի կազմակերպելու համար, իսկ սաներն այնքան գեղեցիկ արտասանեցին ու երգեցին, որ հանդիսատեսն ամեն մեկի մեջ տեսավ մի փոքրիկ Ավո, Բեկոր, Շահեն ու մեր շատ հերոսների կերպարների ընդհանրացում:

Մեր աչքերից հպարտության արցունքն էր հոսում, երբ լսում էինք մեր հզոր ու անհաղթ բանակի, մեր քաջ զինվորների մասին. ինչ-

պե՛ս էին երգում՝ ուղղակի տեսնել էր պետք:

Նրանք չեն տեսել Արցախյան պատերազմը, բայց հանդիսատեսը զգում էր, որ պատերազմից հետո նրանք հայի ոգու ծլարձակած հունդերն են հայրենի հողում, քանզի չարի սերմն անարմատ է, որի համար էլ չպետք է բույն դնի մեր հողում, իսկ մեր ազգի որդիներն արծիվներ են՝ բարձունքներ գրավող, հրահատ են՝ չարը վանող ու տեր կանգնող հայրենի հողին ու եզերքին: Ու տարածվում է մեր մանուկների խորխտ ձայնը.

Ես հպարտ եմ, որ քո զարմն եմ Ու քեզ նման արծիվ ունեմ, Շուտով ես էլ կծառայեմ Ու Արցախիս տեր կկանգնեմ:

Ապա հետևում է «Ձարկիր, հայ՛ զինվոր» երգը:

Դահլիճը համակ ուշադրությամբ, հուզմունքից արտասվաթոր աչքերով նայում էր մեր հայրենիքի պապազ զինվորներին՝ ապագա պաշտպաններին ու վերապրում ամեն պահը, երբ խոսվում կամ երգվում էր գոհվածների մասին:

Հիշվեց ռուս մեծ բանաստեղծի խոսքը. *Դա մեռածներին պետք չէ, ես գիտեմ, Բայց ապրողներին շատ է հարկավոր:*

Իրոք, այսօրվա զինվորը սրբազան գործ է կատարում մեր փոքրիկ հողակտորի համար,

որ հայրենիք է կոչվում, որի համար այնքան արյուն թափվեց, որ սրբազան հողն էլ, մարդն էլ: Մենք հզոր ենք, քանզի կանք, հզոր ենք ոգով: Դեռևս չճանաչված, բայց արևի տակ գոյատևելու իրավունքը վաստակած Արցախը



հպարտ է իր գավակներով:

Նահատակներ ունեցանք, բայց նրանք միայն ֆիզիկապես են բացակա: Հոգու լեռնացած հուզմունքով, անսահման ցավով մայրեր ունենք, հայրակորույս որդիներ, ջահել պապիկներ կորցրած թոռներ:

Ասում են՝ ամեն սերունդ իր ժողովրդի

պատմության հիշողության կրողն է: Նոր սերունդը հպարտությամբ է հիշում իր ժողովրդի պատմությունը, հայի տառապահին ճակատագիրը, որի համար էլ ձգտում է ավելի ամուր լինել, ավելի նվիրված, գիտելիքներով հարուստ ու բազկով ուժեղ:

Թող մեր սերնդին Աստված սպասված խաղաղություն և մխիթարություն պարգևի:

Հանդիսատեսը մեծ գոհունակությամբ ընկալեց միջոցառման իմաստը: Բոլորի անունից դպրոցի տնօրեն Ալվինա Խաչատրյանը շնորհակալական և խրախուսական խոսք ասաց կազմակերպիչների և մասնակիցների մասին:

Հարգելի խմբագրություն, ուզում եմ ձեր թերթի միջոցով խմբակավարներ Ա.Աղաջանյանին և Ֆ.Ավանեսյանին, ՄՊՍԿ տնօրեն Մերի Գարբիելյանին շնորհակալություն հայտնել գեղեցիկ, բովանդակալից, շունչ ու ոգի տվող հայրենասիրական այս միջոցառման համար:

Ալվինա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ավետարանոցի Ի. Աթայանի անվան
միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

ԵՐԳ, ՊԱՐ, ԱՍՄՈՒՆՔ

Ամփոփվեցին Արցախյան ազատագրական շարժման 30-ամյակին նվիրված՝ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից դպրոցականների շրջանում անցկացված գրական-երաժշտական մրցույթի արդյունքները: Ստեփանակերտի Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում մրցույթի հանրապետական փուլին մասնակցեցին մայրաքաղաքի և հանրապետության բոլոր շրջանները ներկայացնող հանրակրթական դպրոցների աշակերտներ: Մրցույթի կարգով նախատեսված էին ազգագրական, հայրենասիրական, մարտական երկուսական երգ, պար, ասմունք՝ խմբային և անհատական:

Դա բավականին ծավալուն միջոցառում էր, ընդգրկում էր արվեստի երեք ժանր, որ բավական դժվարություն էր ստեղծում վերջնական ամփոփման համար: Բայց, իհարկե, կային զովասանքի և դիտողության արժանի այն կարևոր հատկանիշները, որ նկատեցին ժյուրիի անդամներն ու կազմակերպիչները:

«Քանի տարի աշխատում են նախարարությունում, միշտ երագել են, որ մեր դպրոցները երգեն, պարեն ազգային երգ ու պար: Այսօր իմ երազանքն իրականացած տեսա: Դրանից մեծ ձեռք-բերում մշակույթի բնագավառում դեռ չի ունեցել Արցախը: Մեր ազգը դարձրել էր շարունակ աշխարհի հավերժ պայքարող ժողովուրդներից է: Հավերժ պայքարող ժողովուրդը պայքարել է՝ զենքի հետ ունենալով պարզ, երզը, և այդ մարտական պարերը, «Յարխուշտան» մեր մարտական գործողությունների, մեր մարտական ոգու խորհրդանիշն են»,- ասաց ԱՀ ԿԳՍՆ նախարարության և արտադպրոցական բաժնի պետ Աննա Այվազյանը՝ գովասանքի և շնորհակալության խոսք ուղղելով բոլոր խմբերին, առանձնապես ծայրամասերից եկածներին:

Բոլոր պարերը հրաշալի էին, բայց ժյուրին առանձնացրեց Աստղաշենի խումբը մարտական պարերի համար՝ ընդգծելով Շարժման 30-ամյակի կապակցությամբ դրանց ուղղվածությունը:

Ա. Այվազյանի հատուկ գովասանքին ու շնորհակալությանն արժանացավ երգի ասպարեզում Հաղորթի շրջանի Տողի խումբը՝ ներկայացրած ծրագրի համար (խմբում ընդգրկված էին նաև Ազոխի և Մեծ Թաղերի դպրոցների աշակերտներ): «Տողի խումբը խորացել է իր ազգի արմատների մեջ: Մենք պետք է աշխատենք պահել մեր արմատները: Ժամանակակից երգերի մեջ էլ կան շատ լավերը, ապրեն նրանց հեղինակները, բայց ազգը, ծառը ամուր է իր արմատներով: Եթե մենք հիմքը չպահենք, ինչքան ուզում են ճյուղերին ճյուղ կպցնեն, ամուր չի լինի, եթե ամուր չէ արմատը»,- այսպես գնահատեց Ա. Այվազյանը:

Իսկ ահա ասմունքը նա մեր ամենաթույլ տեղը համարեց: Որպեսզի ասմունքի մակարդակը բարձրանա, Ար-

ցախում տարին մի քանի անգամ կազմակերպվում են ասմունքի մրցույթներ՝ նախարարության, Աժ-ի կողմից և համահայկական: «Բայց դեռ չենք հասել անհրաժեշտ նշանոթին»,- նկատեց նա՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչներին կոչ անելով ավելի շատ



ուշադրություն դարձնել ասմունքի քերականական կանոններին, արտահայտչականությանը: Շատերը կարծում են՝ ինչքան ողբով արտասանեն, այնքան խորը կընկալվի: «Պե՞տք է մի օր վերջ տանք այդ ողբին, թե չէ, բայց անգամ ողբը նկարագրող ասմունքը կարելի է մարտական տրամադրությամբ արտահայտել, ոչ թե լացելով»,- ասաց Ա. Այվազյանը՝ ասմունքողներին խորհուրդ տալով համացանցից հետևել հայտնի ասմունքողներին:

Այնուամենայնիվ, լավ ասմունքողներ եղան: Հանդիսատեսի վրա մեծ տպավորություն բողեց Քարվաճառի դպրոցից Մարիամ Ասրյանի՝ Հ. Սահյանի «Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ» բանաստեղծության արտասանությունը, որը հենց համապատասխանում էր բոլոր կանոններին: Ցանկալի կլինի նրան տեսնել նաև Ասմունքի համահայկական մրցույթ-փառատոնում:

Եվ այսպես, ժյուրիի որոշմամբ՝ երգի ասպարեզում 1-ին տեղ գրավեցին Հաղորթի շրջանի Տողի (երգ) խումբը,

2-րդ տեղ՝ Նորայր Գոգոբյանը (Քաշաթաղի շրջան, Կովսական), 3-րդ տեղ՝ Արևիկ Սևունյանը (Մարտունու շրջան, գ. Շեխեր):

Պարի ժանրում 1-ին տեղում էր Ասկերանի շրջանի Աստղաշենի (պար) խումբը, 2-րդ տեղում՝ Ստեփանակերտի հ. 9 դպրոցը, 3-րդ տեղում՝ Մարտակերտի հ. 1 դպրոցը:

Ասմունքի ժանրում 1-ին, 2-րդ և 3-րդ մրցանակային տեղերին արժանացան Լինա Միրզոյանը (Շուշիի Խ. Աբովյանի անվան դպրոց), Վահե Գրիգորյանը (Հաթերք), Արման Գրիգորյանը (Ստեփ. հ. 7 դպրոց):

Ակտիվ մասնակցության համար խրախուսվեցին Մարիամ Ասրյանը (Քարվաճառ), Արեն Աղաջանյանը (Իվանյան), Քաշաթաղի շրջանի Կովսականի միջնակարգ դպրոցը, Մարիամ Վարդանյանը (Շուշի), Ռաֆիկ Ալեքսանյանը (Բերձոր):

Պարզևատրուներ եղան նաև առանձին անվանակարգերում. «Ավանդական պար» անվանակարգում՝ Քարվաճառի միջնակարգ դպրոցը, «Խմբի առաջնորդ» անվանակարգում՝ Արթուր Սարգսյանը (Տող), «Հուզիչ ասմունք» անվանակարգում՝ Անահիտ Հովհաննիսյանը (Մարտակերտի շրջան, գ. Մաղավուզ):

Մասնակիցները պարզևատրվեցին ԿԳՍՆ՝ «Պարաբայան շարժման 30-ամյակին նվիրված գրական-երաժշտական մրցույթին ակտիվ մասնակցության համար» դիպլոմով, հաղթողները՝ արժեքավոր նվերներով, իսկ 1-ին տեղ գրավածները՝ նաև դրամական պարգևով:

Մրցույթից դուրս դիպլոմի արժանացավ Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի աշակերտ Արթուր Բաղդասյանը, որն ընդմիջմանը ներկայների համար հրաշալի երգեց: Նշենք, որ պատանին մրցույթի ժամանակ հանդես էր եկել խմբի կազմում: Այս կապակցությամբ նաև հարկ է նշել ընդմիջմանը մի շարք կատարողների ցուցադրական ելույթները. առանց որևէ մեկի հրահանգի նրանք բեմ բարձրացան և այդ ամբողջ ժամանակ, քանի դեռ ժյուրին ամփոփում էր արդյունքները, գեղեցիկ կատարումներ պարզևեցին: Սկիզբը դրեց Տողից Արթուր Սարգսյանը, որն արտասանեց համազուգուցու՝ արցախյան բարբառով բանաստեղծությունը:

Իրոք, արվեստը միավորել էր բոլորին: Անբռնազբոս, անկաշկանդ յուրաքանչյուրը ներկայացրեց իր տաղանդը: Վերջում՝ մի նկատառում. մրցույթների ժյուրիի կազմում ցանկալի է, որ ընդգրկվեն չեզոք մասնագետներ:

Ս. ՎԱՐԻԵԼՅԱՆ

ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Արցախյան շարժման 30-ամյակի առթիվ Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառումների ծրագրերում ընդգրկված էին ստեղծագործական շարադրությունների և նկարչական մրցույթներ: Լավագույն մասնակիցների պարգևատրման արարողությունը տեղի ունեցավ Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ.7 հիմնական դպրոցում: Ներկա էին փոխքաղաքապետ Արմեն Հակոբյանը, ԿՍ բաժնի պետ Կառլեն Մարգարյանը, բաժնի մասնագետներ, ուսուցիչներ, աշակերտներ, հյուրեր:

Ողջունելով հյուրերին՝ ԿՍ բաժնի պետ Կ. Մարգարյանը արժուրեց Արցախյան գոյապայքարի հաղթանակները և ընդգծեց, որ եթե 451թ. Վարդանանց պատերազմի հաղթանակը բարոյական էր, ապա մեր հաղթանակները ոչ միայն բարոյական, այլև իրական են: Նա շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին՝ աշակերտներին հայապաշտ, հայեցի ոգով կրթելու համար:

Մրցութային հանձնաժողովին ներկայացվել է 67 շարադրու-




թյուն: Պատվավոր 1-ին տեղը զբաղեցրել են Տաթև Հարությունյանը (Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմն. դպրոց, 8-րդ դաս., ուս.՝ Անայա Վանյան), Հովհաննես Մարգարյանը (Ս. Մաշտոցի անվան հ. 4 հիմն. դպրոց, 8-րդ դաս., ուս.՝ Նորա Թամրազյան), Անահիտ Այդինյանը (Ա. Սախարովի անվան հ. 8 միջն./հոսաքային դպրոց, 11-րդ դաս., ուս.՝ Լյուդմիլա Յարամիշյան):

2-րդ տեղի համար պարգևատրվեց 11 աշակերտ, որից Իլյա Հակոբյանը՝ Ք.Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանի սան (ուս.՝ Անուշ Բաբայան): Նկարչական մրցույթում առաջին տեղը գրավեց Աստղիկ Առուշանյանը (հ.12 հ/դ, 7-րդ դաս., ուս.՝ Լուսինե Սահակյան), երկրորդ տեղը՝ Սիրա Հայրապետյանը (հ.10 հ/դ, 9-րդ դաս. ուս.՝ Հասմիկ Դավթյան), երրորդ տեղը՝ Նարե Հայրապետյանը (հ. 6 հ/դ, 7-րդ դաս., ուս.՝ Լուսինե Հայրապետյան):

1-3-րդ մրցանակային տեղեր գրաված աշակերտները պարգևատրվեցին քաղաքապետարանի պատվոգրով, 1-ին տեղ գրավածները նաև՝ հուշանվերով:

ԿՍ բաժնի գլխավոր մասնագետ Թերեզա Ղարախանյանը, շնորհավորելով մրցանակակիրներին, ասաց, որ յուրաքանչյուր սերունդ պետք է իմանա իր հայրենիքի պատմությունը, ուսուցիչները հայրենասիրական ոգով պետք է դաստիարակեն աշակերտներին՝ զարգացնելով նրանց ստեղծագործական միտքը, կարողությունները, ունակությունները: Նա համոզված է, որ ստեղծագործական կարողություններով օժտված աշակերտը նա է, ով ընթերցում է գեղարվեստական գրականություն, գիտի իր ժողովրդի պատմական անցյալը: Շարադրություններից նա նկատեց մասնակիցների՝ հայրենիքին զինվորագրվելու պատրաստակամությունը:



Հասմիկ ՀԱՎԻՅԱՆ

ՆԱԽԱԿԹԱՐԱՆ

ԱՇԽԱՐՀՈՒՄ, ԱՆՆ, ՄՈՐԻՑ ՔԱՂՅՐ...

Քանի մայրը կա՝
խիղճը չի մեռնի,
Քանի խիղճը կա՝
Աստված կհառնի:

Ռուկոյ. ՇԻՐԱԶ

Ստեփանակերտի հ. 2 մանկապարտեզի 12 խմբերի հրաշամանուկները մայրերին նվիրված գարնան տոները դարձրին հիշարժան, անակնկալներով լի: Գարնան շնչով, վառ արևով, կապուտաշյա մանուշակներով, վարդերով, հազար ու մի ծաղիկներով, ջերմ բարեմաղթանքներով, բանաստեղծություններով և պարերով շնորհավորեցին մայրիկներին ու տատիկներին: Նրանց ամեն շուրթերից հնչեցին գարնան և մայրերին փառաբանող ոգեշունչ բառեր: Գարնանային գեղեցիկ պարտեզի հոգեթով ծաղիկների բույրը, ժրջան մեղուների բզզոցը, թռչունների դայլայլը հնչեցին փոքրիկների ամեն բառում, երգի ամեն մի հնչյունի ու պարերի շարժման թաքուն խորքերում: Տոնական տրամադրությամբ երգեցին ու պարեցին փոքրիկները, և սկսվեց գարնան ու ծաղկունքի մի գեղեցիկ հանդես, քանզի մայրությունն ինքնին գարուն է ու գեղեցկություն: Մանուկների աչքերում արևն էր շողում, երբ «մայրիկ» էին ասում, նրանց գրնգուն ձայների մեջ սերն էր կարկաչում. - Այսօր քո տոնն է, սիրելի՛ մայրիկ... - Ես սիրում եմ քեզ, մայր իմ ամուշիկ... - Իմ մայրիկը սիրուն է, ասես, լինի մի ծաղիկ... Փոքրիկներն անչափ երջանիկ էին. ասուններով, երգ ու պարով, գեղեցիկ

բացիկներով իրենց անսահման սերը, երախտագիտությունն արտահայտեցին այնքան սիրելի էակի հանդեպ: Յուրաքանչյուրի մայրիկը քնքուշ է ու գեղեցիկ, ազնիվ է ու թանկագին, մայրիկը՝ ծով համբերություն ու ծով բարություն: Մայրիկի հայացքը մեղմ է, խոսքերը՝ անուշ: Երփներանգ ծաղիկներ դարձած փոքրիկ հրաշքներն իրենց գեղեցիկ խոսքով, քնքշությամբ



ու գարնան թովչանքով լցրին մայրիկների սրտերը: Յուրաքանչյուր մարդու համար մորը համարժեք միայն մայր հայրենիքն է, ինչպես իրենց շուրթերից հնչեցրին մեր մանուկները: Նրանց հոգու խոսքը, նորանուտ երգերի հոգեզմայլ հնչյունները ստիպեցին բոլորին հավատալ, որ մեր վաղվա օրն ապահով ձեռքերում է: Իրենց

խոսքերով ապացուցեցին, որ մայրն ու հայրենիքը երկու սրբություններ են մեզ համար: Հայրենիք և մայր. սրբություններ, որոնք արտասանելիս սիրտդ հուզմունքից մի ամիս կարողանի և լցվում անգամ այն պահին, երբ հայրենիքում ես և մորդ կողքին: Նայում և մորդ քաղցր հայացքում գտնում ես այն գերբնական ուժը, այն վեհ զգացումը, որը մարդուն թևեր է տալիս՝ թռչելու դեպի կյանքի ամենադժվարին ճամփաները, դիմանալու թշնամու հարվածին, զգալու կյանքի գեղեցկությունն ու քաղցրությունը: Պատահական չէ, որ մեզ համար թանկ սրբությունները կոչվում են մայր հայրենիք, մայր եկեղեցի, մայրենի լեզու: Հայ մայրերն ու կանայք իրենց խոնարհության, համեստության, համբերության, տոկունության, անսահման սիրու ու նվիրումի համար բոլոր դարերում համենամտվել են Աստվածամոր հետ, քանզի մոր սիրուց ավելի անշահախնդիր սեր չկա աշխարհում: Հայոց պատմության դժվարին ժամանակներում հայոց մայրերը մեր սրբությունները պաշտպանելու համար միշտ կանգնած են եղել որպես զինվոր. վկա՝ Ավարայրը, Սարդարապատը, Արցախ աշխարհը: Փառք ու պատիվ բոլոր ժամանակների հայոց մայրերին... Աստված իմ, քեզ մի խնդրանք՝ պահպանիր աշխարհի բոլոր մայրերին, թող որ նրանք երբեք արցունք չթափեն, թող երբեք զավակ չկորցնեն, միշտ ժպտան ու երջանիկ լինեն... **ՌԵՆԱ ԲԱՐՍՈՒՊԱՐՅԱՆ «ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԻՎ 2 ԿԵՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՐԿԵԶ» ԴՊԱԿ-Ի ՖՈՒՖՈՐՏԻ**

Շնորհավորանք ՎԱՏԱԿԱՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ



Ուսուցիչը բոլոր ժամանակներում եղել է, կա ու կմնա ժողովրդական կրթության կենտրոնական դեմքը: Խ. Աբովյանի «Հազար անգամ թուրմուր, բայց մեկ անգամ օրինակ տուր»՝ մանկավարժին պատգամած հորդորը կենսուղի է դառնում բոլոր նրանց համար, ովքեր ուսուցիչ են ծնվում ակամա և ուսուցիչ են դառնում անվամբ ու կոչմամբ: Եթե մարդն ինքը չի որոշում և պատասխանատու չէ իր կյանքի սկզբի համար, ապա իր ապրածի, անցածի ու անելիքի համար պատասխանատու է, անկասկած: Յուրաքանչյուր մարդ, անկախ իր մասնագիտությունից, կարիք ունի դրվատանքի, երբ բարեխղճորեն է կատարում իր աշխատանքը: Խոսքը Ազոխի միջնակարգ դպրոցի տնօրեն Իլյաս Պողոսյանի մասին է: Արդեն 20 տարի է՝ նրա խոսքով է սկսվում դպրոցի ուսումնական տարվա մեկնարկը: Ամեն տարի մի նոր սերունդ է կյանք մտնում՝ տանելով իր հետ նրա մաղթանքներն ու պատգամները: Հաճախակի է կատարում դասալուսմներ, դրանք մանրակրկիտ վերլուծում, տեղին դիտողություններ անում, բացահայտում հաջողություններն ու բացթողումները: Խստապահանջ ղեկավարն անդրադառնում է նաև սովորողների ճիշտ դաստիարակությանը, ուսուցչի՝ ինքնակրթությամբ զբաղվելու կարևորությանը: Տարբեր ամբիոններից հաճախակի է հնչում նրա ձայնը դպրոցի առջև հրատապ հիմնախնդիրների շուրջ: 2001թ. տարվա լավագույն տնօրեն է ճանաչվել: Մարտի 27-ը նրա կյանքում նշանավորվեց որպես 6 տասնամյակների բոլորած մարդու անցած ճանապարհ: Մանկավարժական երկարատև գործունեության շնորհիվ շրջապատում ձեռք է բերել հեղինակություն, իսկ տարիների տնօրենի պարտավորություններն ուղեկցվել են հաջողություններով, որը հատուկ է եղել մեր դպրոցին: Շնորհավորում ենք Ձեզ 60-ամյա հոբելյանի կապակցությամբ և մաղթում բեղմնավոր և արդյունավետ աշխատանք ու եռանդ: Ցանկանում ենք, որ բոլորս էլ Ձեզ հետ աշխատենք մեր երազանքների նոր դպրոցում՝ հաջողության ու նորանոր ձեռքբերումների սպասելիքներով: **Ազոխի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ**

ՈՒՐԱՆ ՈՒ ԶՎԱՐԹ ՏՈՆ

Հոգևոր դաստիարակությունը անձի ընդհանուր, առավել ևս հայեցի դաստիարակության կարևոր բաղկացուցիչն է, որը պետք է մարդու մեջ սաղմնավորել մարդու մեջ: Հոգևոր դաստիարակությունը մանկական տարիքում շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, մշակութային ժառանգության փոխանցման համար: Նկատենք, որ Արցախի հանրակրթարաններում արդեն ձևավորվել է հոգևոր, ազգային, ռազմախայրենասիրական դաստիարակության այս ամուր եռտանգին, որն անհատի փոքր ու մեծ առաքինությունների ակունքն է: Չատիկը, որը խորհրդանշում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը, որպես ուրախ, գունազեղ, պայծառ տոն է նշվում նախակրթարաններում: Ավելին, այն թևածում է Չատկական շաբաթվա շրջանակներում, իսկ եթե հաշվի առնենք նաև դրա նախապատրաստությունը, ինչպես, ասենք, Ստեփանակերտի հ. 5 պետական մանկապարտեզում էր, այն դարձել է միամայակ: Այստեղ կազմակերպվեց համամանկապարտեզային ցուցահանդես՝ «Գարուն, մայրիկ, արև» և եզրափակվել գատկական թեմայով: Տնօրեն Սուսաննա Ավարայանը տեղեկացրեց, որ մանկապարտեզի բոլոր երեք խմբերի երեխաների ծնողներին նախորոգ հայտարարվել է ցուցահանդեսի մասին, և նրանք սիրով արձագանքել են, ներկայացրել տարբեր աշխատանքներ: Ծնողներն ամբողջ գործընթացը նկարահանել են և ուղարկել մանկապարտեզի տնօրինությանը, որպեսզի հավաստեն, որ աշխատանքները իրենց բաղկերի հետ են արվել և ոչ թե ինչ-որ տեղից վերցված գործեր են: «Դա ծնող-երեխա-մանկապարտեզ եռամիասնության ձևերից մեկն է,- ասաց Ս. Ավարայանը՝ մեկ-



նաբանելով դաստիարակության գործընթացում իրենց կողմից կիրառվող մեթոդները: Երեխաները կրկնօրինակում են մեծերի վարքը: Ինչի արժեքներով մենք ապրում ենք, մեծանալով նույնը կրում են մեր երեխաները, և եթե մենք ապրում ենք բարոյական և քրիստոնեական արժեքներով, ապա մեր երեխաներն էլ կլինեն դրանց կրողները»: Չատկական տոնը շնորհավորելու էին եկել Ստեփանակերտի Աբ. Հակոբ եկեղեցու քահանա Տեր Մինասը՝ Հայկ սարկավազի հետ միասին: Ազգային տարագով փոքրիկները հյուրերին դիմավորեցին գատկական խմորեղենով: Նախակրթարանի մուտքից սկսած՝ միջանցքներում, պատերին մի քանի շարքով ցուցադրանմուշներ են: Դրանք պատրաստված են ամենատարբեր նյութերով՝ ինչ մարդու մտքով կարող է անցնել՝ խտաբամբակե շրջանիկներ, ականջմաքրիչ, ձողիկներ, գույնզգույն կոճակներ, բրինձ, ձևավոր մակարոն, պլաստիկ նյութեր, թելեր, շյուղեր.

տարբեր գույնի ձվեր. հնարավոր չէ բոլորը թվարկել: Դրանք դարձել են զամբյուղ, ծաղիկ, արագիլ, գեղեցիկ կոմպոզիցիաներ: Ակնհայտ է վառ երևակայության արտահայտչականությունը: «Չատկական աշխարհ է այսօր այս մանկապարտեզում այս հրաշք գործերով: Չատիկը գեղեցկություն է, գույներ են, գարուն է, հաղթանակ, ուրախություն: Ապրեք, որ այսքան գեղեցիկ գործեր եք կատարել ձեր ծնողների հետ միասին», - ցուցահանդեսից ստացած իր տպավորությունները կիսեց Տեր Մինասը:



Ս. Ավարայանը երեխաներին ներկայացրեց հոգևոր սպասավորներին: Տեր Մինասը օրհնության ծես կատարեց, բոլորը հոտնկայս արտասանեցին Տերունական աղոթքը: Ի տարբերություն մանկապարտեզի տոնական մյուս միջոցառումների, որտեղ երեխաներն են հանդես գալիս, այդ օրը դաստիարակները երեխաների համար փոքրիկ բեմականացում ներկայացրին, որն այն մասին էր, թե ինչպես է ընտանիքի ամենավոքոր տան մյուս անդամների սիրտը լցնում բարությամբ դժբախտության մեջ հայտնված մերձավորի նկատմամբ: «Իմ տպավորությունը շատ մեծ է, ես այսօր եկեղեցուց հետո մանկապարտեզում Չատկական երկրորդ կարևոր տոնը կատարեցի: Ես հիացած եմ ձեզով, այս փոքրիկ, բայց խոր իմաստ ունեցող բեմականացմամբ, որտեղ գովաբանվեց, փառաբանվեց աստվածային սերը, որը մեզ բոլորիս կբարձրացնի», - ասաց Տեր Մինաս քահանան: «Երեխան այստեղ պետք է տեսնի ճաշակ, գեղեցկություն, մաքրություն, սեր, բարություն, համոզություն, համոզություն», - մանակրթարանի համերաշխ, համախումբ կոլեկտիվի աշխատանքի ընդամենը մի փոքրիկ կողմն է ներկայացնում տնօրեն Ս. Ավարայանը: Իրոք, այնտեղ, որտեղ կա սեր, կա խաղաղություն, կա և լիարժեք կյանք: **Լ. ԽԱԶՍՏՐՅԱՆ**

ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ

ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂՍԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1988 թվականը դարձավ ազգային վերագրության մեկնակետ. Արցախյան շարժումը վերածեց ազգային-ազատագրական գոյապայքարի, որը շարունակվեց մինչև 1994թ. զինադադարը: Հարաբերական խաղաղության մեջ ապրող Արցախը ցայսօր պարտադրված է դիմագրավել ժամանակ առ ժամանակ հակառակորդի կողմից սանձազերծվող առճակատումների: Արցախյան շարժումը, Գոյապայքարն ու առանձին դրվագներ արտացոլվեցին արվեստում, գրականության մեջ՝ գեղարվեստական, փաստավավերագրական արձակ գործերում և պոեզիայում: Մ. Բախտինը Դոստոևսկու ժառանգությանն անդրադառնալիս գալիս է այն եզրահանգման, որ Դոստոևսկին իր կերպարները երբեք ոչնչից չի ստեղծել, երբեք «դրանք չի հորինել»: Հատկապես Արցախյան շարժման, պատերազմի թեմատիկայով գրական-գեղարվեստական գործերում ակնառու է մի խորթային երևույթ. գրական հերոսները կերպավորվում են իրական հերոսների ամբողջությունից, և բոլորն էլ կյանքից են եկել պոեզիա կամ արձակ ստեղծագործություն: Նրանք բոլորն իրական են, և արկածայնությունն ու գերիրապաշտությունն այս պարագայում գրողական և ոչ մի ժանրի դավանանքը չեն դառնում: Ինքնություն, ազգային տեսակ, ճշմարիտ արժեքների պահպանում. թերևս այսպիսին է գրական ստեղծագործությունների այս շրջանի խոհերի ու սպրուկների դիմանկան: Եթե ընդհանրության մեջ դիտարկենք ստեղծագործությունների թեմատիկ ընդգրկվածությունը, կարելի է փաստել, որ բոլոր հեղինակների գործերում առկա է ինտելեկտուալ ստեղծագործական կարողությունների, կենսափորձի ու զգացականի բարդ համադրություն: Բոլոր ստեղծագործություններում առկա են ազգային խորը անգիտակցական միջ ածանցվող սիմվոլիկա, մտածողություն, ներհայն, ինքնագիտակցություն: Հայրենասիրության, տեսակի և ինքնության պահպանման գաղափարի ընկալումից արտածված են ոչ միայն մարդկային հոգու, այլև ազգային մտածողության խորթային բոլոր դրսևորումները:

Գրականագետ Արթուրյանի Լիկոլույսյանն իր «Բարձունքը մերն է, տղերքը չկան...» հոդվածում իրավացիորեն նշում է. «Արցախյան պատերազմի մասին գրված բոլոր գործերում կա մշտական հիշեցումը, թե ինչ ծանր գնով ենք ձեռք բերել հաղթանակը մեզ պարտադրված պատերազմում: Մեր գրողները որդեգրեցին ոչ թե հաղթանակ փառաբանելու, այլ պատերազմին ՈՉ ասելու քաղաքականությունը»:

2016թ. ապրիլյան ճակատագրական իրադարձությունը, որը պատմություն մտավ Ապրիլյան քառօրյա պատերազմ անվամբ, չէր կարող վրիպել հայ գրողի գրական տեսադաշտից: Բոլոր ժամանակներում էլ պատմական կարևորագույն իրադարձություններն իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել գրականության էջերում: Ապրիլյան օրերին Արցախի գրողներն ստեղծեցին գեղարվեստական գործեր, որոնք յուրատիպ ուղերձներ են՝ հղված մի կողմից սահմանին սխալաբեր գործող զինվորին, մյուս կողմից՝ իրադարձություններին հեռվից հետևող միջազգային հանրությանը և ընդհանրապես մարդկությանը: Թուրքական ցեղասպան քաղաքականության ժառանգորդ Ադրբեջանը նույն ահաբեկչական ձեռագրով գործեց Մարտի 1992թ. ապրիլ ամսում կազմակերպված Մարտի 1992թ. ապրիլ խաղաղ բնակչության ցեղասպանություն, նույն ձեռագրով գործեց Սուճայիթում և Ադրբեջանի հայաշատ բնակավայրերում՝ 1988թ. պետական մակարդակով խրախուսելով և իրականացնելով թեմիկ գտումներ, զազանաբար խոշտանգելով, ողջակիզելով, տանջամահ անելով հայերին: Այս ցեղասպան ձեռագրով գործեց նաև 2016թ. ապրիլին. հանկարծակի լայնամասշտաբ պատերազմ սանձազերծելով դարաբաղա-արդրեջանական սահմանի ողջ երկայնքով և մտնելով սահմանամերձ հայկական առաջին գյուղը՝ Թալիշ, սպանել և խոշտանգել է երկու տարեց բնակիչների: 2016թ. ապրիլյան իրադարձությունները, քաղաքական, սոցիալական, ռազմական իրավիճակը, արցախցու խոհը, հունամիզմը, ցավը, հույզերն ու զգացմունքները, զինվորի անմախառն սխալները, հաղթանակն

ու կորստի մրմուռը, գրողի գեղագիտական պրիզմայով անցնելով, գեղարվեստական ուրույն պատկերներով արտացոլվել են Արցախի գրողների գործերում: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Արցախի գրական ընտանիքի նահապետ **Սուրբատ Խանյանը** գրեց իր «Հպարտություն» բանաստեղծությունը՝ նվիրված Արցախի հերոս, ապրիլյան քառօրյայում անմահացած Ռոբերտ Աբաջյանին: Բանաստեղծը Ռոբերտ Աբաջյանի կերպարով կերտում է առհասարակ հայ զինվորի սխրագործ կերպարը. «Դու հաստատեցիր, որ մարտերի մեջ/Մի հայ զինվորը տասի ուժ ունի»:

Ապա բանաստեղծը ներում է հայցում հերոսից, որ իր երգը կոչում է մեծ հպարտություն և բանաձևում հայ զինվորի անպարտելիության խորհուրդը. «Հպարտությունս գիտակցված մահի է, // Քո մահը, որդիս, չունի պարտություն»:

Հայ զինվորը կռվում էր Վահագնի պես, ոչ թե որպես զինվոր, այլ՝ կռվի Աստված, և այս գերբնական ուժին հավասարագոր խիզախումն է, որ ազերի-թուրքին սանձեց և թույլ չտվեց Արցախը դարձնել մի նոր Նախնական: Խանյանը այս բանաստեղծության մեջ գեղարվեստական պատկերներով շնչավորում է հերոսի խիզախման պատմությունը, որը դասի ուժ ունի, և հերոսությունը համարում է դեպի Նախրյան արև ձգվող լույս՝ դեպի վերջնական հաղթանակ:

Արցախի ԳՄ նախագահ, բանաստեղծ **Վահան Հակոբյանը** իրադարձություններին արձագանքեց «Կենդանի պատ» պոեմով, որը հերոսապատում է՝ նվիրված ապրիլյան քառօրյայի նահատակներին: Պոեմում բանաստեղծն արձարժում է ազգային, քաղաքական, սոցիալական խնդիրներ: «Հայոց ապրիլի/1-ը// դարձավ սկսվեց/ապրիլի/24-ով», - ահագանգում է արցախցի պոեմը և իր խոսքն ուղղում «անակաճ շախմատին»: Գեղարվեստական պատկերավորմամբ գրողը ներկայացնում է ապրիլյան արհավիրքները Թալիշում, Մատադիսում, որտեղ ազերիները գլխատել, խոշտանգել, հոշոտել են հայերին, խաղաղ բնակչությանը: Բանաստեղծի ցատունն ուղղվում է նաև դեպի մեր երկրները, որոնք գեներ են վաճառում Ադրբեջանին, ապա անդրադառնում է ՌԴ փոխվարչապետ Դմիտրի Ռոզոզինի կերպարին և մեջբերում նրա խոսքը, որ «կրակում է ձեռքը, ոչ թե գեներ...»: Ապա հեզմանքը սուր երանգ է ստանում, երբ դիմում է քրիստոնյա Ռոզոզինին. «Դու ճիշտ ես, // մուսուլման Դմիտրի, //ի դեպ մեր Աստծո, // ի սեր քո Մկախի, // դու ճիշտ ես...»: Պոեմում բանաստեղծը առաջ է քաշում ազգի՝ ինքն իր ուժերին ապավինելու և հայրենիքի փրկության հարցում հույսը օտարների վրա չդնելու գաղափարը. «Արցախը սակայն/Արցախ է մնում // իր ուժը/միայն/տեսնելով իր մեջ»: Այս գիտակցումով էլ տղաները դարձան կենդանի պատ՝ կերտելով Արցախի հաղթանակը: Բանաստեղծը մեջբերում է նաև ապրիլյան քառօրյայում նահատակված տղաների վերջին խոսքերը, և սերունդներին հղված պատգամի պես է հնչում հայրենիքի սահմաններն անխախտ պահելու և թշնամուն մարտական դիրք չհանձնելու նրանց հրամայականը:

Ապրիլյան պատերազմը յուրահատուկ արտացոլվեց **Հրանտ Ալեքսանյանի** «Կանայք և պատերազմը» բանաստեղծության մեջ: Պատերազմները կոխում են մարդկային, անգամ մարդկության ամենամուրբ կեցող կանայք, պատերազմին մայրում են համարձակ և ուղիղ աչքերով՝ չերկնչելով մահից. «Երիտասարդ կանայք քայլում էին մայրով/խոսում երեկվա հրետակոծությունից/, որ ճարակել էր մերձակա շրջանը.../Որքան էլ արտառոց, անըմբռնելի էր/կանայք մահացու դիրքի մասին/ խոսում էին անվախ, ծիծաղելով... »:

Գրողը հոգեբանորեն թափանցում է իր կերտած հերոսների ներաշխարհը և ընդգծում նրանց հուզազգացական անպարփակ աշխարհի դոմինանտ գաղափարը՝ հայրենիքի սահմաններն անառիկ պահելը, ինչ գնով էլ լինի: Այսպիսին է արցախցու արժեքային համակարգը՝ ֆանատիզմի հասնող հայրենասիրություն, երբ խոսքը վերաբերում է կենսատարածքի պահպանմանն ու պաշտպանությանը: Հայրենի հողին կառչած մնալու անընկճելի կամքը

հզոր է անգամ մայրական բնագոյից: Այսպես է մտածում Հ. Ալեքսանյանի հերոսը, որն Արցախում ապրող ու արարող հայն է: Այսպես մտածում են երիտասարդ կինը, որդուն մարտադաշտ ուղարկած մայրը, զինծառայող կինը, ամուսնուն դիրքեր ճանապարհած, երեխայի ծննդին սպասող հղի կինը, մարտագործողություններում զոհված սիրած երիտասարդի հիշատակը սրտում մշտապես վառ պահող օրիորդը... և այս անընկճելի կամքը կնոջը դարձնում է ավելի գեղեցիկ, ու հեղինակը ընդհանրացնում է. «Պատերազմի օրոք կանայք ավելի են գեղեցկանում՝ ներքուստ, արտաքինապես.../Գեղեցկությունը խաղաղության մայրն է»:

Նորել Գասպարյանի՝ ապրիլյան օրերին գրած «Վերջին մարտը» բանաստեղծությունը սոցիալական ցանցերում ու էլեկտրոնային կայքերում բազմաթիվ դիտումներ էր արձանագրում: Սասնա ծռերի հաղթական զարկով, հեթանոս աստվածների՝ ծովից ծով Հայաստանը խորհրդանշող անպարտելիությամբ, Աստծո՝ Տիրոջ հովանավորությամբ մարտադաշտում հայ զինվորն է՝ ընդդեմ զարախոտ թշնամու: Բանաստեղծության մեջ ողբի, կորստի ցավի, նվնվոցի երանգներ չկան: Բանաստեղծը հաղթական ոգով մարտակոչ է հնչեցնում հայ զինվորին՝ հանդգնած, որ հաղթանակը հայինն է: Վրեժի ու ցատունի հույզերն են խտացված բանաստեղծության յուրաքանչյուր քառատողը՝ անփոփոխ հայրենասիրություն հիշեցնող՝ «ջնջում ենք, տղերք, ես դրանց մերք...» արտահայտությունը: «Ես նորից ծուռ եմ, ծիւ էլ Բուռնիկն է, իմն է երկինքը, //Իմ ամեն մի զարկ Աստծո պատվեր է, առաջ է Տերը, //Եկողը սուտ է, եկողը փոշի, մնացած քոչից...»,- գրում է Ն. Գասպարյանը: Ուշագրավ մի հանգամանք, որ հաճախ է նկատվում պատերազմն արտացոլող նրա գործերում ենք, տղերք, ես դրանց մերք...» արտահայտությունը դիմում է հեթանոս աստվածների անպարտելի ուժին, ոչ թե քրիստոնեական հնագնդությանը. վերջին մարտում երկինքն ու երկիրը, ամբողջ բնությունն ու կրոնները համախմբվում են հայ զինվորի շուրջ՝ նպաստելով նրա հաղթանակին:

Ավարդ Ավագյանը գրեց «Ապրիլյան պատերազմ» շարքը: «Հայության պատռված երակից» բանաստեղծության մեջ տեսնում ենք հայության ցավը, ժամանակի, պահի ողբերգական նկարագիրը: Բացվող օրը հայի անարատ հացին «մրուր ու լեղի» է տալիս: «Մեծ բախման շրջանն է իջել // աղ ցանի ապրիլյան վերջին, // զինվոր իմ, տղայք մեր սիրելի...»,- գրում է բանաստեղծուհին և մարտիկի նման կոչ անում տղաներին պահի կարգախոսը՝ «արիանալ» և «ո՛չ մի թիզ» անարթ թշնամուն, // ուն ձեռքից եկածն է լոկ նախճիր...»:

Առանձին դեպքերում կին գրողների մոտ մայրական բնագույն ակնառու է ստեղծագործության ենթատեքստերում:

Բանաստեղծուհի **ժամնա Բեգլարյանի** որդին այդ օրերին առաջնագծում էր՝ մարտական ամենաթեժ կետերից մեկում: Պատերազմի դաշտում կռվող որդի ունեցող մայրը ռազմակոչ չի հնչեցնում իր բանաստեղծության մեջ, ոչ էլ երկրի օրհասական պահը ողբում: Նրա բանաստեղծությունը աղոթք է սահմանում կանգնած զինվորի համար, ատելություն է՝ պատերազմի հրահրողների նկատմամբ և հունամիստական արժեքների քարոզում: «Պատերազմն ու ատելությունը քարոզողները/կյանքի գինն ուրացած մանկուրտներ են// և առնչություն չունեն քաղաքակրթության հետ», - գրում է նա: Բանաստեղծուհին ուզում է մարդու նոր տեսակ արարել՝ «աջքակուշտ, մեծսիրտ, կյանքամեծար ու սեփական կոչումը չժխտող»:

Բանաստեղծուհի **Զինաիդա Բալայանը** «Դարերից են հառել...» բանաստեղծությունում ստեղծեց ապրիլյան անմահացած հերոսների՝ Ռոբերտ Աբաջյանի, Ադան Սահակյանի, Քյարամ Սլոյանի, Արմենակ Ուրֆայանի... փառավոր ներկայությունը: «Սահմանամերձ գոտիներում, թե՛ մարտերում, տղերք, //Լեզբնդ դարձաք արիության, // սուրբ նահատակ դարձաք: Մեծ-մեծակով դարձաք զորաբանակ անպարտ, // Յետ նահանջել չկար՝ դարձաք հաղթաբանակ...»:

Արձակագիր Լևոն Խեչոյանը մի առիթով

ասել է, որ գրականության դերը կարողանալու հնարավորություն է՝ պատերազմն ատել տալու:

Արցախի երիտասարդ սերնդի բանաստեղծները, ապրիլյան քառօրյա ռազմագործողությունների անմիջական մասնակիցը լինելով, լավ գիտեն պատերազմի և խաղաղության գինը, և նրանց պատկերած պատերազմը խեչոյանական այս դավանանքին է հարում:

Խրամատոն ու խրամատային կյանքը ներշնչել են **Հայասեր Հովսեփյանին**: Նա իր բանաստեղծություններում, խեչոյանական պատգամին հավատարիմ, պատերազմն ատել է տալիս յուրովի: Պատերազմները, որտեղ սպանվում, լլկվում են մարդիկ, բանաստեղծի համոզմամբ, չի կարելի կոչել հաղթական: Մարտընկերոջ զոհվելն ու արյունը տեսնող բանաստեղծ մարտիկն ընթրստանում է խաղաղության դեմ, այն խաղաղության, որը մարտադաշտում լքում է կռվող զինվորին. «Դու վախկոտ ես, խաղաղություն: // Տեսել ես կարմիր արյունը/սպանված զինվորի// և անամոթաբար միշտ//լքում ես ինձ, // երբ ես կանգնում եմ//այս արյունոտ խրամատում, //ինչպես հոգին է լքում մարմինը//սպանված իմ ընկերոջ»: Զուգորդումների և մտապատկերների պարադոքսն ակնառու է նրա այս բանաստեղծությունում: Հայասերը խաղաղությունը անձնավորում է՝ դիմելով «դավաճան», «անամոթ» մակիրներով, որովհետև լքելով նրան՝ զինվորին դարձնում է զնդակի թիրախ, ապա հրամայում կանգ առնել, մնալ իր թիկունքում, որովհետև թիկունքում, ամենաթանկն են՝ մանուկները. «Մնա իմ թիկունքում, // այնտեղ մանուկներ կան // անմեղ, անհոգ... // Կանգ առ, անամոթ...»: Իրականում, սակայն, այս բանաստեղծությունը կարելի է համարել պատերազմները ժխտող և խաղաղությունը ներբողող յուրատիպ մի գործ: Մեկ այլ ստեղծագործության մեջ նա «գեղեցկություն» և «խաղաղություն» բառերը գործածում է որպես հոմանիշներ:

Ապրիլյան քառօրյայի մասնակից երիտասարդ բանաստեղծ **Վիտալի Պետրոսյանի** բանաստեղծություններում ևս տեսնում ենք պատերազմը մերժող և խաղաղության ձգտող շեշտադրումներ: «Ինքնածիզ սահմանապահն է խավարի ու լույսի», - գրում է Վիտալին՝ հակադրելով պատերազմը խորհրդանշող խավարը լույսին՝ «լուսնի գեղեցիկ դեմքին»: Սահմանին ժամանակը առաջ չի գնում. «Խեղճական կրակահերթը, // և վայրկյանները սկսում են հոսել»: Բանաստեղծ զինվորի, որը պատերազմի մեջ եղել է արդեն մեկ անգամ, մտապատկերում պատերազմն այլևս ավարտ չունի. «Պատերազմը ավարտ չունի, այն շարունակվում է գերեզմանոցում», - գրում է բանաստեղծը:

Երիտասարդ բանաստեղծուհի **Սոնա Համբարձումյանը** ապրիլյան քառօրյային անդրադարձավ «Վերադարձածները» բանաստեղծությանը: Բանաստեղծության մեջ տեսնում ենք երեք սերնդի մղած պատերազմի խորհրդանշան պատկերներ: Երեք սերունդ՝ պապը, հայրը, եղբայրը, Մեծ Հայրենական, Արցախյան ազատագրական և ապրիլյան պատերազմներից վերադարձած հաշմված զինվորներ են, ովքեր /պապը՝ չերևացող ձեռքերով, հայրը՝ չերևացող ոտքերով, եղբայրը՝ կույր աչքերով/ շարունակում են լուռ հիշեցնել ու պատմել պատերազմի մասին. «Պատերազմից վերադարձած երկիրը/Սահմանում անվերադարձ կորուստներ է ունենում // Կանխելով վերադարձը/Սուր պատերազմի»:

Այսպիսով՝ ընթերցողի առջև բացվում է հետազոտության ևս մի հետաքրքրական դաշտ՝ իրական հերոսների ներկայությամբ: Արցախյան շարժման, մասնավորապես՝ 2016թ. ապրիլյան պատերազմի թեմատիկան ամփոփող բոլոր այս գործերում կա անցյալի արժևորում, ներկայի իմաստավորում, ապագայի ճշմարիտ արժեքների կերտում, որտեղ ընդարձակ են ներքին ազատության տարածքներն ու սահմանները:

Զարինե ՍԱՈՒՋՅԱՆ
Բանասիրական գիտությունների
թեկնածու, ԱրՊՀ ավագ դասախոս

ՄԱՐԶԱՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ

«ԵՍ ԵՐԳԻ ՄԵՋ ԵՍ, ԵՐԳԸ՝ ԻՄ ԷՈՒԹՅԱՆ»



Մարդիկ կան, ուն հետ ծանոթության առաջին պահից այնպիսի մտերմիկ դաշտ է ստեղծվում, որ թվում է, թե վաղեմի ծանոթներից է, պարզապես մի առժամանակ չեք տեսնվել: Մարդկային այդ տեսակից է Ավետարանոց գյուղի դպրոցի երգ-երաժշտության ուսուցչուհի Ֆլորա Ավանեսյանը:

Նա նաև գյուղի մանկապարտեզի երաժշտության դաստիարակն է, Ասկերանի ՄՊՍԿ-ի Ավետարանոցի մասնաճյուղի երգ-երաժշտության խմբակավարը: Ծննդով Մարտունու շրջանի Սոս գյուղից է: Աչք է բացել մի ընտանիքում, որտեղ երգ-երաժշտությունը օդ ու ջրի, հանապազօրյա հացի պես էր, անբաժան ուղեկիցը տոնական ու ոչ տոնական օրերի՝ տարին բոլոր: Տանը բոլորը երգում էին՝ հայրը, քույրերը, եղբայրը, իսկ մայրը գյուղի ակումբավարն էր և աշխատանքի բերումով գյուղի մշակութային կյանքի կազմակերպիչն ու համակարգողը: Այնպես որ, աղջիկը մանկուց ակումբում և դարձրեց կազմակերպիչը մշակութային միջոցառումների կենտրոնում էր: Դասերգներով և զանազան միջոցառումներով մոր հետ հաճախ էր լինում հարևան գյուղերում, այնտեղ էլույթներ էր ունենում՝ միշտ արժանանալով հանդիսատեսի ջերմ արձագանքին: Դպրոցում սովորելու տարիներին մասնակցել է տարբեր մրցույթների ու փառատոների, և ինչպես ինքն է ասում, միշտ առաջին տեղ էր գրավում՝ պարզապես իր նվերներով ու պատվոգրերով: Դպրոցն ավարտելուց հետո մասնագիտության ընտրության հարց չծագեց, որովհետև իր կյանքն առանց երգի չէր պատկերացնում: Ընդունվեց Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի վոկալի բաժինը, որտեղ ուսումնառության չորս տարիների ընթացքում նույնպես մասնակցում էր մրցույթների՝ գրավելով մրցանակային տեղեր: Բաբվում կայացած հանրապետական մրցույթում առաջին անգամ արժանացել է դափնեկրի կոչման: Ուսումնարանն ավարտելուց հետո երգի հանդեպ սերը նրան տարավ Երևանի պետական կոնսերվատորիա: Սիրված ու անվանի երգիչ Դովհաննես Բաղաթյանը, ծանոթանալով նրա կատարողական ունակություններին, խորհուրդ տվեց ընդունվել նախապատրաստական բաժին: Ուրախությանը չափ չկար, քանի որ երգարվեստի աշխարհը նրա դեմ բացել էր երազանքների ու հնարավորությունների մի նոր ասպարեզ: Ընդունվեց, սակայն տնեցիների համակցմանը նրան հետ բերեցին գյուղ, և անկատար մնաց պրոֆեսիոնալ երգչուհի դառնալու երազանքը: Հարցին՝ չի՞ փստոսում կատարվածի համար, Ֆլորան նկատեց, որ զոջունի պահեր միշտ էլ լինում են, իսկ տառապանքը փարատում է այն, որ այսօր էլ երգն իր հետ է՝ տանը թե աշխատավայրում: «Երգն իմ կյանքն է, ես առանց երգի չեմ պատկերացնում իմ գոյությունը, ես երգով եմ ապրում, արթնանում եմ երգով, նրանով է իմաստավորվում ապրած օրս, առտնին գործերիս անբաժան ուղե-

կիցն էլ երգն է, ես ամբողջովին երգի մեջ եմ, երգն էլ՝ իմ էության մեջ»:

Հարս գալով Ավետարանոց՝ այստեղ գտել է իր երջանկությունը, ունի հրաշալի ընտանիք, որը այնքան նման է հայրական ընտանիքին, որ, իր խոստովանությամբ, ասես նրա շարունակությունը լինի: Իր կյանքի ընկերոջ մեջ Ֆլորան գնահատում է անսահման աշխատասիրությունը՝ նշելով ոսկեծեղ վարպետի նրա ծիրքը՝ քիթեղից, փայտից, երկաթից ամեն տեսակի բարձրարվեստ իրեր պատրաստելու շնորհքը: Ալբերտի նմանների մասին է ժողովուրդն ասում. «Ձեռքովն ամեն ինչ գալիս է, կամ ձեռքից բան չի պոծում»: Նա էլ երգի սիրահար է, և երգում է, և հրաշալի պարում, այնպես որ նրանց օջախից անպակաս են երգն ու երաժշտությունը: «Պատկերացնում եք, աշխատանքից հետո, երեկոյան, երբ ընտանիքը հավաքվում է, օրվա բոլոր հոգսերն ու հոգնությունը ցրում ենք երգով: Ամուսինս դափով նվագակցում է ինձ, շատ հաճախ էլ ձայնակցում, հետո մեզ են միանում մեր երեք տղաները, մի խոսքով՝ երգն ու երաժշտությունը թևածում են մեր ընտանեկան հարկի ներքո, և երանելի այդ պահերին իմ հայրական տան կարոտն եմ առնում, որտեղ հորս, քույրերիս ու եղբորս հետ էի երգում»: Ասենք, որ Ֆլորան եղբոր ու քույրերի նման երգի ու երաժշտության հանդեպ ունեցած մեծ սիրո համար իրեն պարտական է համարում հորը՝ Բաբկեն Ավանեսյանին: Հասարակ շինարարի նրա աշխատանքը, թվում է, հեռու է արհեստավարժ երգ-երաժշտությունից, բայց ինչքան է այն սիրել, որ կարողացել է իր սիրով վարակել չորս զավակներին և այնպես, որ երգը նրանց կյանքի անբաժան ուղեկիցը դառնա. «Հայրս շատ էր սիրում ժողովրդական ու աշուղական երգերը և այնքան գեղեցիկ էր երգում, որ մինչ այսօր ականջներիս հնչում է նրա քաղցրահնչյուն, զմայլելի ձայնը: Այն տարիներին խրախուսվում էին ընտանեկան համույթները. մեր ընտանիքը դասական օրինակ կարող էր լինել, որովհետև բոլորս երգում էինք: Քույրս ու եղբայրս նույնպես երաժշտական կրթություն են ստացել՝ այն ընտրելով որպես մասնագիտություն: Եղբայրս երաժշտության ուսուցիչ է, աշխատում է մեր գյուղի՝ Սոսի արվեստի նորաբաց դպրոցում, մասնավոր դասեր է տալիս, հարսանիքների է մասնակցում: Քույրս առավել հետևողական է այս հարցում. որպես երգչուհի՝ արդեն ձայնակազմակերպեր ու ալբոմներ է թողարկել»:

Հեղուսուհիս վառ օրինակն է տարածված մտայնության, թե որքան մեծ է ընտանիքի դերը մատաղ սերնդի ձևավորման գործում, որքան ընդօրինակելի ու վարակիչ կարող է լինել ծնողների անձնակազմ օրինակը: Երեխային ազգային երգ-երաժշտությանը կապելու գործում կարևոր է ոչ միայն մանկապարտեզ-դպրոց օղակի դերը, այլև ընտանիքի, առաջին հերթին՝ հենց ընտանիքի, որտեղ ոչ միայն մեծածնունդ-հասակ է առնում և սպառաքալաքացից, այլև ձևավորվում է նրա հոգեկերտվածքը, հայեցիկ ինքնությունը: Համաշխարհայնացման, օտարամոլության ախտադարտի դեմ պայքարում մեր գեները, մեր ինքնադրոշմը ոսկեղենիկ հայոց լեզուն է, կոմիտասյան քանքարով սրբագործված հայ երգն ու երաժշտությունը, համամարդկային մշակույթի անվիճելի մաս կազմող հայ ազգային մշակույթը:

Մելանյա ՄԻՆՈՅԱՆ

ՔԻՔ-ՔՐԵՍԻՆԳԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ՝ ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄԵՂԱՍԿԻՐՆԵՐ

Քիք-քրեսինգը մենամարտային մարզաձև է, որը սկիզբ է առել 1960-ական թվականներին: Այն բաժանված է ամերիկյան (Ֆուլ-կոնտակտ, Ֆուլ-կոնտակտ լուր-քիքով, սեմի-կոնտակտ, լայթ-կոնտակտ, քիք-լայթ) և ճապոնական (կ-1) ճյուղերի: Քիք-քրեսինգում կան նաև մենակատարային կոմպոզիցիաներ: Ավելի լայն առումով քիք-քրեսինգը ասելով հասկանում են զանազան հարվածային մենամարտեր, որոնց կանոնները թույլ են տալիս ձեռքի եւ ոտքի հարվածներ՝ պաշտպանիչներ եւ բռնցքամարտի ձեռնոցների կիրառմամբ, ինչպիսին են թաիլանդական բռնցքամարտը՝ նույն թայը,

ծանազեց: Ինչպես տեղեկացրեց Ֆեդերացիայի փոխնախագահ Ե. Ստեփանյանը՝ ՄՊՄԳ քիք-քրեսինգի մարզիչ Արմեն Ղահրամանյանը, մասնակից մարզիկներից հինգ հոգի զբաղեցրեց 1-ին, երկուսը՝ 2-րդ, երեքը՝ 3-րդ մրցանակային տեղեր: Մարզիչը հիացմունքով է արտահայտվում կայացած մրցաշարի բարձրաստիճան կազմակերպվածության եւ մրցակիցների՝ մարզաձեւի տիրապետելու բարձր մակարդակի մասին: Ա. Ղահրամանյանը անթաքույց հպարտությամբ նշեց մրցանակային տեղեր զբաղեցրած մարզիկների անունները եւ մեկնաբանեց, որ դժվար մրցապայքար ունեցան, բայց կարողացան ցուցադրել մարզաձեւին տիրապետելու բարձր տեխնիկա: 1-ին տեղ զբաղեցրած մարզիկներ Իգոր Հարությունյանը (15-16 տ., -60 ք.կ), Արեն Հակոբյանը (15-16 տ., -57 ք.կ), Վահրամ Սարգսյանը (13-15 տ., -42 ք.կ.), Հրաչյա Համբարձումյանը (18+ տ., -60 ք.կ), Հարութ Գալստյանը (18+ տ., -63 ք.կ.), 2-րդ տեղ զբաղեցրած Վլադիմիր Գրիգորյանը (15-16 տ., -67 ք.կ.), Արտյոմ Արզումանյանը (12-14 տ., -39 ք.կ.), 3-րդ տեղ՝ Արթուր Հովակիմյանը (12-14 տ., -57 ք.կ), Բորիս Հայրապետյանը (12-14 տ., -57 ք.կ.) եւ Ռոբերտ Ստեփանյանը (10-12 տ., -37 ք.կ) ՀՀ քիք-քրեսինգի ազգային Ֆեդերացիայի կողմից արժանացան համապատասխան մեդալների եւ պատվոգրերի: Ֆեդերացիայի փոխնախագահն ասաց, որ մարզիկների մասնակցությունը մրցաշարին հնարավոր դարձավ շնորհիվ Ֆեդերացիայի նախագահի եւ ԱՀ ԿԳՍ նախարարության աջակցության: Ծնորհակալության արժանացավ նաև սպորտի վարչության պետ Աշոտ Դանիելյանը:



Հուստինյանը, սամուրան, սավատը եւ ուրիշ մարզաձեւեր:

Արցախի ավանդական քիք-քրեսինգի Ֆեդերացիան ստեղծվել է 2016թ. դեկտեմբերին, որի հիմնադիրն ու նախագահը Դավիթ Սարգսյանն է: Միավորելով հարյուրից ավելի մարզիկների՝ Ֆեդերացիան շարունակում է զարգացնել եւ մասսայականացնել քիք-քրեսինգ մարզաձեւը Արցախում, մարզիկների մեջ դաստիարակել հայրենասիրություն եւ առողջ կենսակերպ:

Ամբողջ աշխարհում մեծ հեղինակություն են վայելում քիք-քրեսինգի մրցաշարերը: Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող մրցույթներն ու առաջնությունները մեծ նշանակություն ունեն Արցախի մարզիկների համար: Բացի փորձի եւ նոր հմտությունների ձեռքբերումից, լավագույն արդյունքներ ցուցաբերող մարզիկները հնարավորություն են ունենում ՀՀ հավաքական կազմում մասնակցել արտերկրում կազմակերպվող առաջնություններին:

Մարտի 21-24-ը կայացած Հայաստանի քիք-քրեսինգի առաջնությանը առաջին անգամ մերկայանալով 22 պատանի եւ մեծահասակ մարզիկների խմբով՝ Արցախի ավանդական քիք-քրեսինգի Ֆեդերացիան պատվարժան արդյունքներ ար-

թուր Հովակիմյանը (12-14 տ., -57 ք.կ), Բորիս Հայրապետյանը (12-14 տ., -57 ք.կ.) եւ Ռոբերտ Ստեփանյանը (10-12 տ., -37 ք.կ) ՀՀ քիք-քրեսինգի ազգային Ֆեդերացիայի կողմից արժանացան համապատասխան մեդալների եւ պատվոգրերի: Ֆեդերացիայի փոխնախագահն ասաց, որ մարզիկների մասնակցությունը մրցաշարին հնարավոր դարձավ շնորհիվ Ֆեդերացիայի նախագահի եւ ԱՀ ԿԳՍ նախարարության աջակցության: Ծնորհակալության արժանացավ նաև սպորտի վարչության պետ Աշոտ Դանիելյանը:

Մարզի խոսքով՝ տվյալ մրցաշարում հաղթած մարզիկներն արդեն ընդգրկվել են ՀՀ հավաքական կազմի մեջ եւ նախապատրաստվում են մասնակցել 2018թ. մայիսի 29-ից հունիսի 5-ը Անապայում կայանալիք քիք-քրեսինգի աշխարհի զավթի խաղարկությանը: Ամփոփելով Ֆեդերացիայում սպասվող իրադարձությունները՝ Ա. Ղահրամանյանը նշեց, որ նպատակ ունեն Արցախի շրջաններում մասնաճյուղեր ավելացնել, Մարտակերտի շրջանի վանք գյուղում արդեն մասնաճյուղ ունեն, իսկ հոկտեմբերին մեծ մասշտաբով քիք-քրեսինգի Արցախի մրցաշար կկազմակերպվի:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԸՆՈՒՇԻ ԵՏԻՆՈՒՈՒԳԻՎԱԿԱՆ ՀԱՄԱՍՄԱՐԱՆ» ՀԻՄՆԱԳՐԱՄԻ 2017Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ Շուշիի տեխնոլոգիական համալսարան Հիմնադրամ
2. Հիմնադրամը գրանցված է ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի կողմից:
3. Գրանցման համարը՝ 44316012377:
4. Վկայականի համարը՝ 02 Ա ՈՍՈՅՈՅՈՅ:
5. Գրանցման ամսաթիվը՝ 26.01.2016թ.:
6. Գտնվելու վայրը՝ ք. Շուշի, Աշոտ Բեկորի 4, հեռ.՝ 047731022 1.5. Բջջ. 0972992941.6. Կայք shushitech.am 1.7. էլ. Փոստinfo@shushitech.am:
7. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ Ռեկտոր Հովհաննես Թոքմաջյան, 2017թ.: Աշխատավարձը՝ 10,191,400 ՀՀ դրամ:
8. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի

- անդամները՝**
- Արայիկ Վաղդիմիրի Հարությունյան
 - Սվալիկ Արմինիկ Արայան
 - Արամ Սերգեյի Մխոյան
 - Կարեն Ալեքսանդրի Շահրամանյան
 - Արտակ Արտյոմի Բեգլարյան
 - Արմեն Յուրիկի Սարգսյան
 - Կարեն Արմոյի Ներսիսյան
 - Գագիկ Միքայելի Բաղդուց
 - Ռուդոլֆ Գերասիմի Իսրայելյան
 - Վասպուրակ Սմբատի Կարապետյան
 - Սեյրան Ալեքսանդրի Շահնազարյան
 - Սարիբեկ Բարդուղի Գալստյան
 - Նվեր Ալբերտի Միքայելյան
 - Պարոզ Գագիկի Վերանյան
 - Ռոբերտ Միսակի Հարությունյան
 - Լևոն Գագիկի Գրիգորյան
 - Արտակ Արթուրի Սարգսյան
 - Սամվել Ռաֆայելի Սինասյան

- Գրիշա Ստեփանի Նարինյան
- Զորի Զարգյազի Մուսայելյան
- Նրանցից 9 հոգի ստացել է աշխատավարձ՝ ընդամենը 25,858,600 դրամ:
- 6. Աշխատակազմը՝ 279 հոգի, 388,534,712 դրամ:
- 7. Իրականացված ծրագրերը՝
- 7.1 կրթական ծրագիր (միջին մասնագիտական, բուհական և հետբուհական),
- 7.2 քաղաքաշինության բնագավառում՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և տեխնիկական հսկողություն,
- 7.3 գյուղատնտեսական մթերքների մշակում և արտադրություն,
- 7.4 Գյուտերի արտոնագրում:
- 8. Ֆինանսավորման աղբյուրները՝ ԱՀ պետական բյուջե՝ 450,525,241 դրամ, վճարովի ուսուցում՝ 57,560,750 դրամ, ՀԱԱՀ Ստեփ. մասնաճյուղի միավորումից՝ 72,580,112 դրամ,

- գյուղմթերքների իրացումից՝ 1,191,340 դրամ, տեխնիկական հսկողություն՝ 575,312,607 դրամ՝ և ԼՍԺ մշակում՝ 30,370,492 դրամ:
- 9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 575,312,607 դրամ:
- Կանոնադրական նպատակների իրականացման ուղղված ընդհանուր չափը՝ Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 575,312,607 դրամ:
- 10. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ առդիր:

Ռեկտոր՝ Զ.Վ. Թոքմաջյան
Գլխավոր հաշվապահ՝ Ա.Ա.Շարությունյան

23 մարտի 2018թ.

ՀԻՄՆԱԳՐՈՒՄ

Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրազրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՄԴԸ-ում: Տպաբանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 9.04.2018թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: